2012

ՀՀ կենտրոնական բանկի
բանբեր

2-րդ
եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը 4

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ 14

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ 18

Ֆինանսական համակարգի ցուցանիշներ 21

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 28

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը 29

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակագրության վարչություն

Ա. Դավթյան, Ա. Պետրոսյան, Ա. Գագիկյան

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2011 թվականին 30

Ա. Սողոյան, Ա. Ալեքսանյան

Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը 2011 թվականին 50

ՀՀ ֆինանսական համակարգը 2012 թվականի երկրորդ եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԸ

30.06.2012 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ 461 մասնաճյուղով: 2012 թվականի երկրորդ եռամսյակում արձանագրվել է բանկային համակարգի հիմնական ցուցանիշների աճ:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2012 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալն ավելացել է 1.9 %-ով (6.8 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 369.8 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճը պայմանավորվել է եռամսյակի ընթացքում բանկերի կողմից ապահովված 7.6 մլրդ դրամ զուտ շահույթով:

Հաշվետու եռամսյակում ակտիվների աճի տեմպը գերազանցել է ընդհանուր կապիտալի աճի տեմպը 8.1 տոկոսային կետով: Արդյունքում՝ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 1.3 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 16.5%: Ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նվազել է 1.0 տոկոսային կետով և կազմել 16.8%՝ պայմանավորված ընդհանուր նորմատիվային կապիտալի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ աճով՝ ի հաշիվ հաշվետու եռամսյակի ընթացքում վարկավորման ծավալների ընդլայնման:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 11.8%-ով (197.1 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 1 տրլն 871.2 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ արձանագրվել է 19 բանկում, իսկ նվազում՝ 2 բանկում:


Պարտավորությունների կազմում հիմնականում ավելացել են բանկերի նկատմամբ պարտավորությունները (ներառյալ ԿԲ), իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդները, այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ համապատասխանաբար 19.1%-ով (65.8 մլրդ դրամով), 8.6%-ով (78.0 մլրդ դրամով) և 14.7%-ով (34.8 մլրդ դրամով):

Հաշվետու եռամսյակի վերջին ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային և ցպահանջ ավանդների ընդհանուր ծավալը կազմել է 986.8 մլրդ դրամ: Ընդհանուր ավանդներում ցպահանջ և ժամկետային ավանդների տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 33.4% և 66.6% (31.03.2012 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 33.6% և 66.4%):

Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 10.0 %-ով (59.2 մլրդ դրամով) և կազմել 648.7 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 5.9 %-ով (18.8 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 338.1 մլրդ դրամ:

Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային ավանդները եռամսյակի ընթացքում նվազել են 4.1%-ով (12.7 մլրդ դրամով), իսկ արտարժութային ավանդները՝ ավելացել 15.2%-ով (90.7 մլրդ դրամով): Արդյունքում՝ դրամային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում նվազել է 4.0 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 30.1%:

Առևտրային բանկերի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 6. Բանկերի (ներառյալ ԿԲ) թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ, 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Հաշվետու եռամսյակում պարտավորությունների կառուցվածքում զգալի փոփոխություններ չեն եղել:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Հաշվետու եռամսյակում առևտրային բանկերի ընդհանուր ակտիվներն ավելացել են 10%-ով (203.8 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 2 տրլն 241 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 19 բանկում, իսկ նվազում՝ 2 բանկում:


Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերը (առանց ֆակտորինգի և լիզինգի), ԿԲ-ում թղթակցային հաշիվները և այլ պահանջները, բանկերում թղթակցային հաշիվները և այլ պահանջները՝ համապատասխանաբար 10.4%-ով (135.9 մլրդ դրամով), 7.8%-ով (15.0 մլրդ դրամով) և 13.2%-ով (18.5 մլրդ դրամով):

30.06.2012 թ. դրությամբ տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը (առանց լիզինգի և ֆակտորինգի) կազմել է 1 տրլն 437.4 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում դրամային վարկերն ավելացել են 4.8%-ով (22.5 մլրդ դրամով), արտարժութային վարկերը՝ 13.7%-ով (113.4 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել համապատասխանաբար 495 մլրդ դրամ և 942.4 մլրդ դրամ: Արդյունքում՝ արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում աճել է 1.9 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 65.6%: Տնտեսությանը տրամադրված վարկերի 59.9%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, 34.9%-ը՝ ֆիզիկական անձանց, 5.2%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին:

Առևտրային բանկերի ակտիվների ծավալները




Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը




1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ ակտիվներ

Հաշվետու եռամսյակում ընդհանուր ակտիվների կառուցվածքում էական փոփոխություններ չեն եղել:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները՝ ըստ տնտեսության ճյուղերի



Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի



1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, 2. Մշակող արդյունաբերություն, 3. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, 4. Շինարարություն, 5. Առևտուր, 6. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն, 7. Հիփոթեքային վարկեր, 8. Սպառողական վարկեր, 9. Տնտեսության այլ ճյուղեր

Վարկավորման աճ գրանցվել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում՝ բացառությամբ ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտների: Առավել բարձր աճի տեմպ գրանցվել է գյուղատնտեսության, անտառային տնտեսության ու ձկնորսության, էլեկտրականության, գազի, գոլորշու ու լավորակ օդի մատակարարման և առևտրի ոլորտին հատկացված վարկային ներդրումներում՝ համապատասխանաբար 16.6%, 16.1% և 9.8%:

Երկրորդ եռամսյակում ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել: Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներում մեծ տեսակարար կշիռ ունեն առևտրի, սպառողական և մշակող արդյունաբերության վարկերը՝ համապատասխանաբար 21.9%, 17.4% և 11.2%:

Հաշվետու եռամսյակի ընթացքում 0.5 տոկոսային կետով նվազել է չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում՝ եռամսյակի վերջին կազմելով 4.1%: 30.06.2012 թ. դրությամբ բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 1.9%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը՝ 1.5%-ը, «կասկածելի» դասի վարկերը՝ 0.7%-ը (31.03.2012 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 3.0%, 0.9%, 0.7%):

Վարկային շուկայի ակտիվության արդյունքում եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 2.2 և 8.3 տոկոսային կետերով՝ եռամսյակի վերջին կազմելով 24.4% և 118.1%:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2012 թվականի առաջին կիսամյակում բանկային համակարգի զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո)՝ հաշվարկված ըստ վերահսկողական հաշվետվությունների, կազմել է 15.4 մլրդ դրամ[1], շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների (RoA)՝ 1.5%, շահութաբերությունը (տարեկանացված) ըստ կապիտալի (RoE)՝ 8.4%: Տարվա առաջին կիսամյակի ընթացքում շահույթով են աշխատել 17 բանկ, վնասով՝ 4 բանկ:

2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգի զուտ շահույթը, հաշվարկված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, կազմել է 17 մլրդ դրամ, և այս դեպքում շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) կազմել են համապատասխանաբար 1.6 % և 9.3%:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների՝ 2012 թվականի առաջին 2 եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի համախառն եկամուտները և համախառն ծախսերը կազմել են համապատասխանաբար 175.5 մլրդ դրամ և 155.5 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 30.06.2012 թ. դրությամբ



[1] *ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՍ համաձայն՝ շահույթի մեծությունների խոշոր տարբերությունը հիմնականում պայմանավորված է ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելու փաստով, քանի որ բանկերը այդչափով ծախս են ճանաչում:*

Տոկոսային եկամուտների գերակշիռ մասը՝ 73.6%-ը, բաժին է ընկել տնտեսությանը տրամադրված վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռներ են ունեցել ստացված միջնորդավճարներից եկամուտները, արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտները և արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտները՝ համապատասխանաբար 46.4%, 24.0% և 17.6%:

Տոկոսային ծախսերի կազմում շարունակել են մեծ տեսակարար կշիռ ունենալ ժամկետային ավանդների գծով տոկոսային ծախսերը և առևտրային բանկերից և ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների գծով տոկոսային ծախսերը՝ համապատասխանաբար 47.7% և 20.3%:

Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 42.2%-ը, բաժին է ընկել աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին:

Հաշվետու եռամսյակում առևտրային բանկերի ընդհանուր զուտ մասհանումների[2] մեծությունը կազմել է 6.9 մլրդ դրամ կամ միջին եռամսյակային (տարեսկզբից) ընդհանուր ակտիվների 0.3%-ը:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ


30.06.2012 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել է 32 վարկային կազմակերպություն՝ 86 մասնաճյուղերով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում ավելացել են 13.4%-ով (17.8 մլրդ դրամով) և կազմել 151.1 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 29, իսկ նվազում՝ 3 վարկային կազմակերպությունում:

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի և լիզինգի ընդհանուր ծավալը աճել է 13.0%-ով (11.7 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 101.4 մլրդ դրամ: Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերին բաժին է ընկել 67.8%-ը, իրավաբանական անձանց տրամադրված վարկերին՝ 21.6%-ը, վարկային կազմակերպությունների հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերին՝ 3.4 %-ը, լիզինգին՝ 7.2%-ը:

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերն ավելացել են 8.4%-ով (5.3 մլրդ դրամով) և կազմել 68.7 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերն ավելացել են 17.7%-ով (3.2 մլրդ դրամով) և կազմել 21.9 մլրդ դրամ: Լիզինգի ծավալն ավելացել է 12.4%-ով (799 մլն դրամով) և եռամսյակի վերջին կազմել 7.2 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, 3. Վարկեր իրավաբանական անձանց, 4. Վարկեր ֆիզիկական անձանց, 5. Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին, 6. Լիզինգ, 7. Արժեթղթեր, 8. Հիմնական միջոցներ, 9. Այլ ակտիվներ

[2] Զուտ մասհանումները «Մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին» ծախսային և «Վերադարձ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից» եկամտային հոդվածների տարբերությունն է, և վերլուծական նպատակով հիմնականում օգտագործվում է «զուտ մասհանումներ» ցուցանիշը: Տարվա ընթացքում նույն ակտիվի դասի վատացմանը և լավացմանը զուգընթաց, համապատասխանաբար ավելանում են «Մասհանումներ» և «Վերադարձ» հոդվածները, ըստ որի էլ բացատրվում են համախառն ծախսերում և համախառն եկամուտներում վերջիններիս զգալի տեսակարար կշիռները:

Դրամով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալն ավելացել է 6.5%-ով (3.7 մլրդ դրամով), իսկ արտարժույթով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը՝ 24.4%-ով (7.9 մլրդ դրամով): Արդյունքում՝ արտարժութային վարկերի և լիզինգի տեսակարար կշիռը աճել է 3.7 տոկոսային կետով և 30.06.2012 թ. դրությամբ կազմել 40.1%:

Ակտիվների կառուցվածքում էական փոփոխություններ արձանագրվել են ֆիզիկական անձանց և վարկային կազմակերպությունների հետ կապված անձանց ու աշխատակիցներին տրամադրված վարկերի գծով. ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2.0 տոկոսային կետով, իսկ վարկային կազմակերպությունների հետ կապված անձանց ու աշխատակիցներին տրամադրված վարկերի տեսակարար կշիռը աճել է 1.4 տոկոսային կետով:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը աճել է 0.4 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել 3.4%: 30.06.2012 թ. դրությամբ վարկային կազմակերպությունների «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 1.6%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.9%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.9%-ը (31.03.2012 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 1.5%, 1.0% և 0.4%):

Հաշվետու եռամսյակում ընդհանուր պարտավորություններն ավելացել են 17.8%-ով (15.1 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 99.7 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորվել է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 22.8% (10.7 մլրդ դրամով) աճով:

Իրավաբանական անձանց նկատմամբ ցպահանջ և ժամկետային պարտավորությունները նվազել են 4.6%-ով (798.6 մլն դրամով) և եռամսյակի վերջին կազմել 16.6 մլրդ դրամ: Ֆիզիկական անձանց նկատմամբ ցպահանջ և ժամկետային պարտավորությունները ավելացել են 37.0%-ով (1.7 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 6.5 մլրդ դրամ:

Պարտավորությունների կառուցվածքում էական փոփոխություններ արձանագրվել են բանկերի նկատմամբ պարտավորությունների, այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների և իրավաբանական ու ֆիզիկական անձանց նկատմամբ ժամկետային պարտավորությունների մասով: Բանկերի նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռը աճել է 5.2 տոկոսային կետով, իսկ այլ ֆինանսական կազմակերպությունների և իրավաբանական ու ֆիզիկական անձանց նկատմամբ ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 2.8 և 2.9 տոկոսային կետերով:


Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը եռամսյակի ընթացքում աճել է 5.8 %-ով (2.8 մլրդ դրամով) և կազմել 51.4 մլրդ դրամ:

30.06.2012 թ. դրությամբ վարկային կազմակերպությունների զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո)՝ հաշվարկված վերահսկողական հաշվետվությունների հիման վրա, կազմել է 2.3 մլրդ դրամ: Տարեսկզբից շահույթով է աշխատել 27, իսկ վնասով՝ 5 վարկային կազմակերպություն: Վարկային կազմակերպությունների շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների (RoA) և շահութաբերությունը (տարեկանացված) ըստ կապիտալի (RoE) կազմել են համապատասխանաբար 3.4% և 9.5%:

Վարկային կազմակերպությունների եկամուտների և ծախսերի կառուցվածքը

Եկամուտների կառուցվածք

(հազար ՀՀ դրամ)




Տոկոսային եկամուտներ

Ոչ տոկոսային եկամուտներ

Վերադարձ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից

Ծախսերի կառուցվածք

(հազար ՀՀ դրամ)



Տոկոսային ծախսեր

Ոչ տոկոսային ծախսեր

Մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

Տեղեկանք


ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը 2012 թվականի երկրորդ եռամսյակի վերջին

Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[1] 2012 թվականի երկրորդ եռամսյակի վերջին կազմել են 1041.6 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 871.0 մլն դոլարի փոխարեն: Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 713.6 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 531.6 մլն դոլար հիմնական գումարի մարումներ[1]: Եռամսյակի ընթացքում վարկային մուտքերի 29.9 %-ը երկարաժամկետ վարկերի գծով է, ընդ որում՝ վարկային մուտքերի 56.9 %-ը ստացվել է Ռուսաստանից, 13.1 %-ը՝ Գերմանիայից, 11.8 %-ը՝ Լատվիայից, 9.1%-ը՝ այլ երկրներից, 9.1%-ը՝ միջազգային կազմակերպություններից:

2012 թվականի երկրորդ եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 21.9 % (նախորդ եռամսյակում՝ 12.2 %), Լյուքսեմբուրգը՝ 9.1 % (նախորդ եռամսյակում՝ 11.3%), Գերմանիան՝ 6.3 % (նախորդ եռամսյակում՝ 7.0 %): Վարկերի մոտ 31.8%-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

2012 թվականի երկրորդ եռամսյակի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի վերջի համեմատ աճել է և կազմել 6.1%: Արտաքին վարկերի մոտ 44.8%-ը լողացող (LIBOR, EURIBOR և այլն) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը 4.7 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը աճել է և կազմել ներգրավված վարկերի 10.3 %-ը:

ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը 2006 - 2012 թվականներին



** Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

*** Նախորդ ժամանակահատվածի վերջի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում զուտ ներգրավված միջոցների գումարը տարբերվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի փաստացի ցուցանիշից, քանի որ ներգրաված միջոցներն արտահայտված են տարբեր արժույթներով, ինչի հետևանքով՝ դրանք դոլարային համարժեքի վերածելիս պարունակում են փոխարժեքի հաշվին վերագնահատումները:*

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30.06.2012 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա է ունեցել 9 ապահովագրական ընկերություն[3]:

Ապահովագրական ընկերությունների ակտիվները եռամսյակի ընթացքում ավելացել են 9.8%-ով՝ 30.06.2012 թ. դրությամբ կազմելով 39.2 մլրդ դրամ: Պարտավորություններն ավելացել են 17.3%-ով՝ կազմելով 25.9 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալը նվազել է 2.5%-ով՝ կազմելով 13.2 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել ավանդները բանկերում (33.8%), ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք ապահովագրավճարները (15.9%), ապահովագրության գծով ստացվելիք այլ գումարները (10.0%) և արժեթղթերում ներդրումները (4.4%):

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել չվաստակած ապահովագրավճարների պահուստը (62.3%), պահանջների պահուստները (11.3%) և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները (3.9%):

[3] 30.06.2012 թ. դրությամբ ամփոփված են փաստացի գործող և հաշվետու 7 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները:


2012 թ. առաջին կիսամյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների՝ վերահսկողական հաշվետվությունների հիման վրա ստացված զուտ շահույթը կազմել է 473.6 մլն դրամ, շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների կազմել է 2.7%, շահութաբերությունը (տարեկանացված) ըստ կապիտալի՝ 7.0%: Շահույթով է աշխատել 6 ընկերություն:

ՖՀՄՄ համաձայն՝ ապահովագրական համակարգի զուտ շահույթը 2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կազմել է 487.6 մլն դրամ, շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների կազմել է 2.8%, շահութաբերությունն ըստ կապիտալի (տարեկանացված)՝ 7.2%:


Հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 23.8 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարները՝ 1.5 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 6.1%-ը:

2012 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, զգալի նվազել է ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) տեսակարար կշիռը և ավելացել առողջության ապահովագրության տեսակարար կշիռը՝ պայմանավորված սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրությամբ:

2011 թ. առաջին կիսամյակում հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի




2012 թ. առաջին կիսամյակում հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի




1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Հրդեհից և բնական աղետներից, 4. Ցամաքային տրանսպորտի, 5. Ֆինանսական վնասների, 6. Փոխադրվող գույքի (բեռների), 7. Դժբախտ պատահարներից, 8. Ընդհանուր պատասխանատվության, 9. Գույքին հասցված այլ վնասներից, 10. Ապահովագրության այլ դասեր

2011 թ. առաջին կիսամյակում հաշվեգրված ապահովագրական հատուցումների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի



2012 թ. առաջին կիսամյակում հաշվեգրված ապահովագրական հատուցումների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի




1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Ընդհանուր պատասխանատվության, 5. Հրդեհից և բնական աղետներից, 6. Աջակցության, 7. Դժբախտ պատահարներից, 8. Փոխադրվող գույքի (բեռների), 9. Ապահովագրության այլ դասեր

Դիտարկվող ժամանակաշրջանում հաշվեգրված ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 6.0 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողներից ստացվող ապահովագրական հատուցումների գումարները՝ 290.5 մլն դրամ կամ ապահովագրական հատուցումների 4.9%-ը:

30.06.2012 թ. դրությամբ ապահովագրական ընկերություններն ունեցել են ապահովագրության 491.9 հազար գործող պայմանագիր, որոնց ապահովագրական գումարների մեծությունը կազմել է 7.0 տրլն դրամ: Ապահովագրական գումարներից վերաապահովագրողներին փոխանցված ռիսկերի վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 1.7 տրլն դրամ կամ ապահովագրական գումարների 24.0%-ը:


Ապահովագրական ընկերությունների կողմից կնքված պայմանագրերի և ապահովագրական գումարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի

Պայմանագրերի կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի՝ 30.06.2012թ. դրությամբ



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ)
2. Առողջության
3. Դժբախտ պատահարներից
4. Հրդեհից և բնական աղետներից
5. Աջակցության
6. Ցամաքային տրանսպորտի
7. Գույքին հասցված այլ վնասներից
8. Ապահովագրության այլ դասեր

Ապահովագրական գումարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի՝ 30.06.2012թ. դրությամբ



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ)
2. Հրդեհից և բնական աղետներից
3. Առողջության
4. Աջակցության
5. Գույքին հասցված այլ վնասներից
6. Դժբախտ պատահարներից
7. Ընդհանուր պատասխանատվության
8. Ցամաքային տրանսպորտի
9. Ապահովագրության այլ դասեր

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ


2012 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություն մատուցող 21 բանկ և 8 ներդրումային ընկերություն: Ներդրումային ընկերություններից յոթը կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել, վեցը՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, վեցը՝ կարող են նաև արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և չորսը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:

30.06.2012 թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները կազմել են 22.7 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազելով 2.2%-ով (502 մլն դրամով): Ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 9.4%-ով (328 մլն դրամով) և կազմել է 3.1 մլրդ դրամ:

2012 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 18.8%-ով (22.4 մլրդ դրամով)՝ կազմելով 141.7 մլրդ դրամ: Կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է ավելի քան երկու անգամ (31.3 մլրդ դրամով) և կազմել 53.7 մլրդ դրամ: Բաժնետոմսերով առուվաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 28.0%-ով (1.1 մլրդ դրամով) և կազմել է 2.9 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերով առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամ-

սյակի համեմատ նվազել է 8.3%-ով (7.7 մլրդ դրամով) և կազմել 85.1 մլրդ դրամ: 2012 թ. երկրորդ եռամսյակի արդյունքներով՝ ՀՀ արժեթղթերի շուկայում շարունակել են գերակշռել պետական պարտատոմսերով գործառնությունները՝ կազմելով շրջանառության 60.0%-ը: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով իրականացված գործառնությունների տեսակարար կշիռներն ընդհանուր շրջանառության մեջ կազմել են համապատասխանաբար 37.9% և 2.1%:

Ներդրումային ընկերությունների կողմից 2012 թ. առաջին կիսամյակում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների մեջ գերակշռել են պետական միջնաժամկետ պարտատոմսերով իրականացված գործառնությունները (կազմել են պետական արժեթղթերով գործառնությունների 51.6%-ը): Պետական երկարաժամկետ և կարճաժամկետ պարտատոմսերով գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են ընդհանուր շրջանառության համապատասխանաբար 36.3% և 12.1%-ը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում կատարված առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 0.7%-ը:

Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 25%-ով (370 մլն դրամով) և կազմել է 1.1 մլրդ դրամ, ընդ որում՝ շրջանառության 16.3%-ը կազմել են ռեպո գործառնությունները, 12.7%-ը՝ կորպորատիվ պարտատոմսերի, 66.4%-ը՝ պետական պարտատոմսերի և 4.6%-ը՝ բաժնետոմսերի առուվաճառքի գործառնությունները:

Ներդրումային գործառնությունների շրջանակներում իրականացված գործառնությունների մեջ 94.1%-ը կազմել են ներդրումային ծառայություններ մատուցող առևտրային բանկերի գործառնությունները, 5.9%-ը՝ ներդրումային ընկերությունների գործառնությունները:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (ներառյալ՝ կարգավորվող շուկայում իրականացված ռեպո գործառնությունները) նախորդ եռամսյակի համեմատ աճել է 38.0%-ով (247.8 մլրդ դրամով) և կազմել 899.7 մլրդ դրամ, որից 285.5 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

30.06.2012 թ. դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 3.0 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի վերջի համեմատ աճելով 4.2%-ով:


2012 թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1641 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 92024 մարդ: ՀՀ արժեթղթերի շուկայում, բացի ՀԿԴ-ից, արժեթղթերի թողարկողներին ռեեստրի վարման ծառայություն են մատուցում նաև երկու ներդրումային ընկերություն, որոնք իրականացնում են 381 ընկերությունների և 29122 սեփականատեր անձանց ռեեստրի վարումը:

30.06.2012 թ. դրությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել թվով 14 թողարկողների 17 արժեթղթեր, այդ թվում՝ 12 բաժնետոմս (11 թողարկողի) և 5 պարտատոմս (4 թողարկողի): Թողարկողներից 4-ը ֆինանսական կազմակերպություն են: Ընդ որում՝ բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմել է մոտ 52.9 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի ծավալը՝ 3.5 մլրդ դրամ: Թողարկողներից մեկը հաշվետու է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ պարտատոմսերի գծով: Թողարկված բաժնային արժեթղթերի 24%-ը բաժին է ընկել առևտրային բանկերին:

Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2012 թ. երկրորդ եռամսյակում

ՀՀ վճարահաշվարկային համակարգը 2012 թ. երկրորդ եռամսյակում դրսևորել է կայուն զարգացման միտումներ: Հաշվետու եռամսյակում ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 7679 մլրդ դրամ (քանակը՝ 3.1 մլն), այդ թվում՝ Կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 6772 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 881 հազար: 2012 թ. երկրորդ եռամսյակում Կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 48%-ով (2189 մլրդ), իսկ քանակը նվազել է 11%-ով (110 հազարով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2012 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 233 մլրդ դրամի 4.6 մլն գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 22 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 4.5 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 1 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 3.5 մլրդ դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 1.13 մլն, որը նախորդ եռամսյակի համեմատությամբ ավելացել է 8%-ով (81 հազարով): Քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 50%-ով և կազմել է քարտային գործառնությունների 9%-ը:


Առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ՀՀ ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել են 40%-ով (65 մլրդ) և կազմել 225 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալն ավելացել է 50%-ով (32 մլրդ) և կազմել 97 մլրդ դրամ: Արդյունքում՝ ֆիզիկական անձանց ուղղված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 128 մլրդ դրամ, որը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 32 մլրդ դրամով:

30.06.2012 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերից 20-ը տրամադրում կամ սպասարկում է վճարային քարտեր: Ընդ որում՝ 19 առևտրային բանկերն անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 52 նոր ավտոմատ գանձման մեքենաներ, և 2012 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 1094: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS-տերմինալների ընդհանուր քանակը եռամսյակի ընթացքում ավելացել է 487-ով՝ կազմելով 5985:

Եռամսյակի ընթացքում գործող «ԱրՔա» քարտերի քանակն ավելացել է 3%-ով (13 հազարով) և կազմել 435 հազար քարտ: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 11%-ով (67 հազարով) և կազմել 698 հազար: Այդ թվում՝ VISA-ն ավելացել է 11%-ով (43 հազարով) և կազմել 439 հազար քարտ, իսկ MasterCard-ը՝ 12%-ով (23 հազարով) և կազմել 217 հազար:

«ԱրՔա» վճարային քարտերի զարգացման դինամիկան



Քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2011 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 28%-ով (51 մլրդ-ով)՝ կազմելով 233.3 մլրդ դրամ, իսկ քանակն ավելացել է 28%-ով (1 մլն-ով) և կազմել 4.6 մլն:

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 1.8 մլն գործառնություն՝ 71.8 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 22%-ով (12.9 մլրդ), իսկ քանակը՝ 20%-ով (0.3 մլն):


VISA քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2011 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 33%-ով (26.6 մլրդ-ով) և կազմել 107 մլրդ դրամ (քանակն ավելացել է 34%-ով (0.4 մլն-ով) և կազմել 1.7 մլն), իսկ MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 42%-ով (11 մլրդ-ով) և կազմել 37.1 մլրդ (քանակն ավելացել է 52%-ով (0.3 մլն-ով) և կազմել 0.8 մլն):

Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները
(2012 թ. երկրորդ եռամսյակում)

Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*այդ թվում՝ «ԱրՔա» քարտերով*	
			ծավալը (մլն դրամ)	*քանակը*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	178562	3895601	57315	1574959
այդ թվում՝ անկանխիկ	467	87079	63	47905
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	50214	505464	13318	169240
այդ թվում՝ անկանխիկ	17004	380499	6928	116770
Ինտերնետ միջավայրում	4495	200877	1203	71590
Ընդամենը	233272	4601946	71836	1815789
այդ թվում՝ անկանխիկ	21965	668455	8194	236265

Միջազգային այլ քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 17 մլրդ դրամ, որը 2011 թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 3%-ով (509 մլն-ով):

ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2009 – 2011 թթ., ինչպես նաև 2011 - 2012 թթ. եռամսյակների ընթացքում



2012 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված գործառնությունների միջին օրական ծավալը կազմել է 2.6 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 51 հազար: 2011 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ գործառնությունների միջին օրական ծավալը և քանակը ավելացել են 28%-ով (համապատասխանաբար՝ 568 մլն-ով և 11 հազարով):

ՀՀ տարածքում շրջանառության մեջ գտնվող մեկ վճարային քարտով իրականացված ամսական կանխիկացման գործառնությունների ծավալը կազմել է մոտ 62 հազ. դրամ, իսկ անկանխիկը՝ 6 հազ. դրամ (քանակը համապատասխանաբար կազմել է 1.2 և 0.2):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ տարածքում ֆիզիկական անձանց կողմից առանց բանկային հաշվի բացման փոխանցումները իրականացվում են առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված՝ դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

Միջազգային դրամական փոխանցումների համակարգերին մասնակից առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2012 թ. երկրորդ եռամսյակում կազմել է 148 մլրդ դրամ (քանակը՝ 713 հազար), որը 7.4 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Այդ համակարգերով ստացված միջոցների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 26%-ով: Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 208 հազար դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ առևտրային բանկերի միջոցով միջազգային դրամական փոխանցումների համակարգերով դրամական միջոցների զուտ ներհոսքը ավելացել է 24%-ով և կազմել 128 մլրդ դրամ:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են 76 մլրդ դրամ՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել են 82%-ով: Մեկ վճարման միջին ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 23%-ով և կազմել 3.2 մլն դրամ: Բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներն արտասահման նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել են 56%-ով և կազմել են 77 մլրդ դրամ:

ՎճարահաշվարկայինԿազմակերպություններ

2012 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են դրամական փոխանցում իրականացնելու լիցենզիա ունեցող 7 կազմակերպություն, որոնցից 3-ը ունեն նաև վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ իրականացնելու լիցենզիա, և միայն վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ իրականացնելու լիցենզիա ունեցող մեկ կազմակերպություն՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն:

Վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական վիճակը և ֆինանսական արդյունքները 2012 թ. երկրորդ եռամսյակում

Ցուցանիշներ	Միայն դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություններ		Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություններ	
	30.063.2012.	30.06.2012-31.03.2012	30.06.2012.	30.06.2012-31.03.2012
Ակտիվներ	18.0 մլրդ	4.22%	2.3 մլրդ	-14.18%
Պարտավորություններ	7.4 մլրդ	0.33%	1.9 մլրդ	-16.61%
Կապիտալ	10.6 մլրդ	7.13%	0.4 մլրդ	-99.88%
	31.12.2011-30.06.2012		31.12.2011-30.06.2012	
Զուտ շահույթ	1.1 մլրդ		265 մլն	

Հաշվետու եռամսյակի ընթացքում միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով արտասահմանից ՀՀ ուղղված վճարումներ են սպասարկել դրամական փոխանցում իրականացնող 2 վճարահաշվարկային կազմակերպություններ:

Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել են՝ արտասահման փոխանցումները՝ 0.2%-ը, իսկ արտասահմանից ստացումները՝ 0.4%-ը: Այդ կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 609 մլն դրամի վճարում, իսկ արտասահման՝ 36 մլն դրամի փոխանցում: Ընդ որում՝ հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը կազմել է 65 հազար դրամ:

Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող 5 կազմակերպություններ մատուցել են կանխիկ միջոցներով վարձավճարների ընդունման ծառայություններ, այդ թվում՝ 2-ը՝ տերմինալների միջոցով:

Վճարահաշվարկային կազմակերպությունները իրականացնում են կոմունալ վճարումների, հեռախոսի և բջջային կապի դիմաց վճարումների, վարկերի մարմանն ուղղված միջոցների, բյուջե ուղղված տուգանքների և պետական տուրքերի, ինտերնետային կապի ծառայությունների դիմաց վճարների ընդունում և այլն: Մասնավորապես՝ 2012 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ տերմինալների միջոցով վարձավճարների ընդունման ծառայություններ մատուցող 2 վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից շահագործվել են 754 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց միջոցով հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել են 10.8 մլրդ դրամի (5.1 մլն գործառնություն) միջոցներ, որից 6.0 մլրդ դրամը՝ կոմունալ վճարումների տեսքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ նշված ծավալը գրեթե չի փոխվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տերմինալային գործունեություն իրականացնող մեկ վճարային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել:

Վճարահաշվարկային 6 կազմակերպությունների գլխամասային գրասենյակների և մասնաճյուղերի միջոցով հավաքագրվել է 27.1 մլրդ դրամ, որից 24.9 մլրդ դրամը՝ կոմունալ վճարումների տեսքով:

Անկանխիկ եղանակով հավաքագրվել է 43 մլն դրամ՝ գրեթե ամբողջությամբ կոմունալ վճարումների տեսքով:

Նույն ժամանակահատվածում 12 առևտրային բանկեր, համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, հավաքագրել են կոմունալ ծառայությունների դիմաց միջոցներ՝ իրենց մասնաճյուղային ցանցի միջոցով, որտեղ կատարվել է մոտ 1.0 մլրդ դրամի չափով 301 հազար գործառնություն:

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ

2012 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը փոփոխություններ է կատարել մի շարք իրավական ակտերում:

Բանկային համակարգի կարգավորման դաշտում.

Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում: Ըստ փոփոխությունների.

- Բանկի՝ առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվել է 4 տոկոս, իսկ առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը՝ 10 տոկոս:
- Եթե երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված պարտավորությունները տվյալ ամսվա ընթացքում միջին օրական հաշվարկով գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5 տոկոսը, ապա տվյալ ամսվան հաջորդող ամսվա համար՝
  - ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների ու ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 4 տոկոս:
  - ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների ու ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 10 տոկոս:

Սույն որոշումը հնարավորություն կտա ապահովելու բանկերի իրացվելիության համապատասխան մակարդակը՝ ըստ առանձին արտարժույթների:

1. Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել է «Առանց ակտիվների դասակարգման լրացուցիչ պահուստավորում իրականացնելու կարգը»: Կարգում սահմանվել են.

- Լրացուցիչ պահուստավորում իրականացնելու դեպքերը, այն է՝
  - մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացում,
  - փոխառուի կողմից ակտիվների՝ պայմանագրով սահմանված և փաստացի օգտագործման նպատակների անհամապատասխանություն,
  - ներքին հսկողության խնդիրների բացահայտում,
  - գրավի գերագնահատման խնդիրների բացահայտում,
  - վարկային պորտֆելի որևէ խմբի վարկերի ուսումնասիրության ժամանակ խնդիրների բացահայտում, որոնք հիմք են հանդիսացել ուսումնասիրված վարկերի դասերի խստացման համար՝ սուբյեկտիվ չափանիշով:
- Յուրաքանչյուր դեպքի համար լրացուցիչ պահուստի առավելագույն չափը, առանձին դեպքերում՝ համապատասխան բանաձևի միջոցով: Լրացուցիչ պահուստավորման առավելագույն չափը բոլոր դեպքերի համար սահմանվել է վարկերի զուտ հաշվեկշռային արժեքի 25%-ի չափով:
- Լրացուցիչ պահուստների ապաճանաչման դեպքերը և կարգը:
- Լրացուցիչ պահուստավորում իրականացնելու որոշումների ընդունման կարգը:

Նշված կարգը հնարավորություն կտա հստակեցնելու Կենտրոնական բանկի կողմից իրականացվող լրացուցիչ պահուստավորման դեպքերը, ինչպես նաև կբարձրացնի դրա կիրառման արդյունավետությունը:

2. Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել է «Համահայկական բանկի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 01/04-ը: Համահայկական բանկի համար սահ-

մանվել են 18 հաշվետվություններ, որոնցից 3-ը ներկայացվում են ըստ փոփոխության, իսկ մեկը՝ միայն տարեկան կտրվածքով:

Բանկերի համար սահմանված հաշվետվություններից Համահայկական բանկի համար չեն սահմանվել պարտադիր պահուստավորման նորմատիվի, ներգրավված և տեղաբաշխված միջոցների ծախսատարության և եկամտաբերության, դրամարկղային շրջանառության, հաճախորդների, նրանց հաշիվների, կատարված փոխանցումների, մատուցված վճարային ծառայությունների և վճարային գործիքների, ֆիզիկական անձանց անունով բանկերի միջոցով արտերկրից մուտք եղած և արտերկիր ուղարկված գումարների, կատարված զեղծարարությունների, զեղծարարության փորձերի, բանկի մասնաճյուղերի, շահագործման հանձնված և շահագործումից հանված տերմինալների, տրամադրված քարտերի, դրանց տեսակների, քարտային գործառնությունների և սպասարկման միջոցների վերաբերյալ հաշվետվությունները:

Կանոնակարգը հնարավորություն կտա կարգավորելու Համահայկական բանկի կողմից հաշվետվությունների ներկայացումը ՀՀ ԿԲ:

3. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում և «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում:

Յուրաքանչյուր հաշվետվական ձևի համար հստակեցվել է պահանջվող տեղեկատվության ներկայացման կարգը, մասնավորապես՝ ինչ արժեքով պետք է ներկայացնել տեղեկատվությունը՝ ամորտիզացված, իրական, թե՞ անվանական:

Վերահսկողական և վերլուծական նպատակներից ելնելով՝ որոշ հաշվետվություններում ընդլայնվել է ստացվող տեղեկատվության կազմը:

Որոշման նպատակն է բարձրացնել բանկերի և վարկային կազմակերպությունների ներկայացրած հաշվետվությունների՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող վերլուծական և վերահսկողական գործընթացների արդյունավետությունը:

4. Կենտրոնական բանկի խորհուրդը փոփոխություններ և լրացումներ է կատարել վարկային կազմակերպությունների գրանցմանն ու լիցենզավորմանը վերաբերող Կանոնակարգ 13-ում:

Սահմանվել է, որ վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի ավելացման և վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխության դեպքում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին միջոցների առկայության վերաբերյալ տեղեկանքի տրամադրման հետ կապված՝ Կենտրոնական բանկի որոշմամբ կարող է բացառություն սահմանվել այն դեպքերի համար, երբ կանոնադրական կապիտալը համալրվում է վարկային կազմակերպության պասիվներում առկա ներգրավված միջոցների (օրինակ՝ մասնակիցների կողմից տրամադրված փոխառության) հաշվին: Միևնույն ժամանակ, սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը վարկային կազմակերպության պասիվներում առկա ներգրավված միջոցների հաշվին կարող է համալրվել միայն Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության ստորաբաժանման՝ դրա վերաբերյալ առարկության բացակայության դեպքում: Ֆինանսական վերահսկողության ստորաբաժանման կարծիքը ստանալու համար վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում վարկային կազմակերպության այդ միջոցների առկայությունը հավաստող հիմնավոր փաստաթղթեր և համապատասխան այլ տեղեկություններ:

Սույն փոփոխությունը հնարավորություն կտա բարելավելու վարկային կազմակերպությունների կողմից կանոնադրական կապիտալի համալրման գործընթացը:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտում.

1. ՀՀ ԿԲ խորհրդի 15.05.2012 թ. թիվ 133-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները» որոշման մեջ: Մասնավորապես՝ ընդլայնվել է օգտագործվող տեղեկատվության կազմը:

2. ՀՀ ԿԲ խորհրդի 29.05.2012 թ. թիվ 146-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում: Յուրաքանչյուր հաշվետվական ձևի

համար հստակեցվել է պահանջվող տեղեկատվության ցանկը, մասնավորապես՝ ինչ արժեքով պետք է ներկայացնել տեղեկատվությունը՝ ամորտիզացված, իրական, թե՞ անվանական:

Արժեթղթերի հուկայի կարգավորման դաշտում.

ՀՀ ԿԲ խորհրդի 15.05.2012 թ. թիվ 135-Ն որոշմամբ հաստատվել է «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից երաշխիքային ֆոնդի կառավարչին հաշվետվությունների տրամադրման կարգը և պայմանները» կանոնակարգ 10/15-ը: Կանոնակարգով սահմանվել են պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից երաշխիքային ֆոնդի կառավարչին պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների կատարած վճարների և մասնակցի պարտադիր կենսաթոշակային հաշվում առկա միջոցների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը և այդ տեղեկությունների կազմը: Կանոնակարգի մշակումը նպատակ ունի հնարավորություն տալ երաշխիքային ֆոնդի կառավարչին՝ կանխատեսելու հնարավոր երաշխավորման դեպքի ի հայտ գալու հավանականությունը և նվազեցնելու իրացվելիության ռիսկի բացասական հետևանքները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.10	31.03.11	30.06.11	30.09.11	31.12.11	31.03.12	30.06.12
Բանկերի քանակը	21	21	21	21	22	22	22
Բանկերի քանակն ըստ կազմակերպաիրավական ձևի	21	21	21	21	22	22	22
ԲԲԸ	3	3	3	3	4	4	4
ՓԲԸ	17	17	17	17	17	17	17
ՍՊԸ	1	1	1	1	1	1	1
Կոոպերատիվ	0	0	0	0	0	0	0
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	21	21	21	21	21	21	20
այդ թվում՝ 50%-ից ավել	14	14	14	15	15	15	15
այդ թվում՝ 95%-ից ավել	12	12	12	12	12	12	12
Բանկերի կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	78.9	79.7	75.3	75.4	75.1	75.1	74.5
Վարկային կազմակերպությունների քանակը	32	31	31	31	31	32	32
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	15	13	13	13	13	13	13
այդ թվում՝ 50%-ից ավել	10	8	8	8	8	8	8
այդ թվում՝ 95%-ից ավել	9	6	6	5	5	5	5
Վարկային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	36.3	32.5	39.9	39.8	39.2	39.2	35.1
Ապահովագրական ընկերությունների քանակը	11	11	9	9	9	9	9
այդ թվում՝ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	0	0	0	0	0	0	0
այդ թվում՝ ոչ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	11	11	9	9	9	9	9
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	8	8	7	7	7	7	7
այդ թվում՝ 50%-ից ավել	6	6	5	5	5	5	5
այդ թվում՝ 95%-ից ավել	4	4	3	3	3	3	3
Ապահովագրական բրոքերներ	5	5	4	4	4	4	4
Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություն մատուցող անձինք[1]	29	29	29	29	29	29	29
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող անձ/բանկ/	21	21	21	21	21	21	21
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող ընկերություն	8	8	8	8	8	8	8
Հաշվետու թողարկող հանդիսացող ընկերությունների քանակը	15	15	14	13	14	15	15
Գրավատների քանակը	128	126	129	132	137	138	143
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	3	2	4	0	5	1	1
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	2	3	0	0	2	0	0
Փոխանակման կետերի քանակը[2]	254	259	256	248	248	252	236
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	3	1	0	1	0	0	0
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	6	1	1	1	0	1	3
Արժութային դիլերների քանակը	2	1	1	1	1	1	0
Դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ	10	10	9	9	9	9	7

[1] «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մասնագիտացված անձինք 2008թ. հունիսի 30-ի դրությամբ վերալիցենզավորվել են որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձինք:

[2] Ներկայացված են գործող փոխանակման կետերը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010 թ. IV եռ.	2011 թ. I եռ.	2011 թ. II եռ.	2011 թ. III եռ.	2011 թ. IV եռ.	2012 թ. I եռ.	2012 թ. II եռ.
Միջին եռամսյակային ակտիվներ[1]	1497538	1602581	1727526	1831322	1981697	2020903	2174354
Միջին եռամսյակային վարկեր	856369	927986	1025696	1078632	1173574	1266248	1390647
Միջին եռամսյակային պարտավորություններ	1184488	1276176	1390297	1490583	1631918	1661825	1808638
Միջին եռամսյակային ավանդներ	637781	684778	726520	811816	895372	905104	960928
Միջին եռամսյակային կապիտալ	313050	326405	337229	340739	349779	359078	365715
Միջին եռամսյակային ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշ	22.6%	21.6%	20.4%	20.0%	18.6%	18.0%	17.1%
Միջին եռամսյակային ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	29.3%	29.3%	27.3%	27.7%	28.2%	26.7%	24.4%
Միջին եռամսյակային ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	132.3%	138.3%	133.2%	125.3%	122.1%	128.8%	118.3%

[1] Միջին եռամսյակային ցուցանիշները հաշվարկվում են եռամսյակի երեք ամիսների մեծությունների միջինացմամբ:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ[1] ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.03.2010	30.06.2010	30.09.2010	31.12.2010	31.03.2011	30.06.2011	30.09.2011	31.12.2011	31.03.2012	30.06.2012	Փոփոխություն 30.06.12 – 31.03.12
Ընդհանուր կապիտալ	**269891**	**278430**	**291355**	**300829**	**335080**	**339694**	**343098**	**355925**	**362960**	**369764**	**6804**
Կանոնադրական հիմնադրամ	**192792**	**195212**	**203799**	**203799**	**210999**	**226432**	**226432**	**233945**	**233945**	**233945**	**0**
Շահույթ / վնաս[2], *այդ թվում՝*	**68868**	**68449**	**72477**	**81950**	**90001**	**76496**	**81608**	**85374**	**92049**	**96281**	**4232**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	4235	11989	20666	30046	8108	19289	24472	32987	7779	15383	7604
Տոկոսային եկամուտներ	31383	64395	98989	136161	38665	81945	127172	175483	54210	108260	54051
Տոկոսային ծախսեր	14089	28407	42945	58667	17280	36834	58412	81462	24351	51113	26761
Ոչ տոկոսային եկամուտներ	8357	17200	27655	40654	10348	21932	34883	48585	11195	24448	13253
Ոչ տոկոսային ծախսեր	15651	32347	49301	69335	18102	37972	57767	81591	21879	45197	23318
Այլ ծախսեր [3]	5765	8847	13723	18766	5522	9721	21400	28028	11394	21013	9618
Ընդհանուր պարտավորություններ[4], *այդ թվում՝*	**1098179**	**1035545**	**1111185**	**1241521**	**1321855**	**1419561**	**1541041**	**1710796**	**1674144**	**1871214**	**197070**
Բանկերի թղթակցային հաշիվներ	10472	9821	7632	11539	7337	2831	9624	8665	37405	7863	-29542
Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ)	192907	190907	223949	267811	283141	323560	350649	384128	306335	401624	95289
Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	95924	97932	118465	138279	158597	188480	191914	221836	237638	272480	34842
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	274894	241966	260918	265045	283997	288636	349976	375760	305816	329292	23476
Ժամկետային ավանդներ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	387103	354138	357443	408017	433339	460006	491549	558460	603004	657560	54556
Ընդհանուր ակտիվներ [5], *այդ թվում՝*	**1383592**	**1329239**	**1417835**	**1560472**	**1656935**	**1759256**	**1884138**	**2066722**	**2037104**	**2240978**	**203874**
Կանխիկ դրամական միջոցներ	66568	64161	68727	74900	70391	68825	70446	89164	77293	82525	5232
Թղթակցային հաշիվներ բանկերում (ներառյալ ԿԲ)	291058	198963	203462	205044	227547	219417	259939	324034	236199	244440	8241
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ)	54557	66866	67657	84930	77154	105246	110143	98287	95492	120705	25213
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15540	15689	17855	20561	19002	24651	24810	28167	30220	31930	1710
Պետական արժեթղթեր, այդ թվում	106748	112438	128331	151298	150803	146022	165805	167502	148457	146251	-2206
ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր				0	0	0					
Այլ արժեթղթեր	6267	5128	6038	5695	6473	7110	6077	4959	4544	4502	-42
Վարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանց	747459	758924	810409	888612	966603	1048231	1107038	1210494	1301532	1437401	135869
Վարկային ներդրումներ, *այդ թվում՝*	**784999**	**794821**	**837216**	**934383**	**1005698**	**1107235**	**1163748**	**1273676**	**1406880**	**1546126**	**139246**
1. Ստանդարտ	741064	756325	799366	905748	970014	1069835	1107738	1229980	1340477	1480002	139525
2. Հսկվող	23168	18337	18902	11320	20727	19345	34988	18774	43106	32012	-11094
3. Ոչ ստանդարտ	16047	13753	13755	11257	8498	13858	13597	15609	12173	23123	10950
4. Կասկածելի	4721	6405	5193	6057	6459	4196	7426	9313	11124	10988	-136

[1] Հաշվարկներում ընդգրկված են ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերը:

[2] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի(վնասի) գումարը:

[3] Տվյալներում ընդգրկված են ակտիվների գուտ մասհանումները և շահութահարկը:

[4] Տվյալներում ներառված չեն ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունները;

[5] Տվյալները ներկայացնում են բանկերի հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները: Նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2010	31.03.2011	30.06.2011	30.09.2011	31.12.2011	31.03.2012	30.06.2012	Փոփոխություն 30.06.12 - 31.0312
Ընդհանուր կապիտալ	**35876.8**	**41440.9**	**40039.1**	**42467.9**	**46844.5**	**48626.8**	**51434.5**	**2807.8**
Կանոնադրական հիմնադրամ	**25591.8**	**28259.1**	**33782.0**	**34310.6**	**37092.8**	**37392.3**	**40320.6**	**2928.3**
Շահույթ / վնաս[1], *այդ թվում՝*	**9569.2**	**12542.7**	**5230.9**	**7102.2**	**8670.9**	**10098.2**	**9545.2**	**-553.0**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	4301.5	3106.2	2258.0	1194.0	2801.8	1486.0	1156.9	-329.1
Տոկոսային եկամուտներ	11952.4	3476.0	6939.4	10825.6	14961.9	4729.0	9621.6	4892.7
Տոկոսային ծախսեր	3881.4	1003.3	2246.3	3448.3	4820.9	1519.5	3357.3	1837.8
Ոչ տոկոսային եկամուտներ	4148.8	1335.1	2445.1	4150.5	6184.4	1571.8	3255.4	1683.5
Ոչ տոկոսային ծախսեր	5791.1	1753.3	3544.4	5548.8	8060.1	2252.6	4893.1	2640.5
Զուտ մասհանումներ	1069.7	-1226.2	2195.5	2189.5	2143.0	726.7	1774.2	1047.4
Այլ ծախսեր[2]	1057.6	174.5	302.7	2595.6	3320.5	316.0	531.1	215.1
Ընդհանուր պարտավորություններ[3], *այդ թվում՝*	**51229.7**	**60310.8**	**63464.7**	**67192.5**	**77006.5**	**84615.6**	**99690.0**	**15074.5**
Բանկերից ներգրաված միջոցներ	10045.2	16993.9	17360.0	16247.5	18073.7	25279.1	34962.2	9683.0
Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցներ	13436.0	12974.8	14934.0	18413.3	21418.5	21990.4	23079.0	1088.6
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	211.5	214.2	266.6	264.0	315.5	684.6	707.7	23.1
Ժամկետային պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	16232.5	19654.2	20150.3	20863.7	22957.7	21466.3	22388.8	922.5
Ընդհանուր ակտիվներ[4], *այդ թվում՝*	**87194.9**	**101751.7**	**103503.9**	**109660.4**	**123851.0**	**133242.8**	**151124.5**	**17881.7**
Կանխիկ դրամական միջոցներ	246.9	276.5	284.7	324.3	1192.9	303.4	337.4	34.0
Բանկային հաշիվներ	4078.2	6347.1	5323.3	4864.2	4702.9	5704.5	6499.2	794.7
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ	17557.8	23419.8	25162.7	27178.5	29464.0	29730.3	34051.9	4321.6
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1539.3	1735.9	2287.7	2564.3	2446.2	2650.7	2941.6	290.9
Վարկեր	55076.3	58999.3	62187.0	64842.4	74666.1	83273.6	94146.4	10872.8
Ֆինանսական վարձակալություն	4577.7	4592.2	4726.5	5344.6	6121.6	6451.1	7249.8	798.7
Պետական արժեթղթեր	744.2	451.1	402.5	650.7	1751.6	1717.0	2099.0	382.0
Այլ արժեթղթեր	3.7	3.7	853.6	847.2	114.9	18.6	25.7	7.1
Վարկային ներդրումներ, *այդ թվում*	**72393.5**	**83663.2**	**88831.6**	**93974.9**	**105931.8**	**116647.0**	**133318.5**	**16671.5**
Ստանդարտ	70478.8	80940.2	86093.8	91289.1	103357.6	113373.6		
Հսկվող	1080.5	1840.5	1637.2	1670.6	1703.8	1701.3		
Ոչ ստանդարտ	421.1	583.1	654.6	604.0	680.8	1057.4		
Կասկածելի	413.1	299.3	437.4	411.2	189.5	514.7	1250.3	735.6

[1] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:

[2] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:

[3] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր պարտավորությունները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև այլ պարտավորությունները, ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորությունները և հաշվարկված վճարվելիք տոկոսները:

[4] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները, սակայն նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 *(մլն ՀՀ դրամ)*

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2010	31.03.2011	30.06.2011	30.09.2011	31.12.2011	31.03.2012	30.06.2012	Փոփոխություն (30.06.2012) - (31.03.2012)
Դրամական միջոցներ	331	49	27	19	193	67	26	-41
Բանկային հաշիվներ	3320	1582	1082	718	1426	1262	1383	122
Ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	2306	3223	2823	2746	2493	4860	10152	5292
Համաապահովագրողներից ստացվելիք գումարներ	7	5	4	2	2	2	0	-2
Վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ	6	24	21	29	15	85	80	-4
Հատուցումների գծով պահանջներ	222	391	308	338	405	510	441	-68
Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ	84	150	141	147	164	176	467	291
Ավանդներ բանկերում	13332	15749	14945	14479	14594	13785	13245	-540
Տրամադրված փոխառություններ	699	848	1685	1021	1095	3169	1078	-2091
Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր		578	945	1081	2651	2687	2382	-305
Արժեթղթեր	2572	3335	2936	2524	2446	2175	1740	-435
Հնարավոր կորուստների անհավաքագրելիության պահուստներ	-340	-471	-561	-429	-397	-599	-619	-21
Վերաապահովագրողի բաժինը ապահովագրական պահուստներում		1720	1462	1525	1889	1951	1914	-37
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	317	372	441	513	495	306	314	8
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր և ապահովագրության գծով կանխավճարներ						1692	2678	987
Հիմնական միջոցներ	1123	1489	1701	1345	1579	1690	1652	-38
Այլ ակտիվներ	1633	2909	2651	2621	2392	1843	2218	374
Ընդամենը ակտիվներ	***25614***	***31952***	***30611***	***28678***	***31442***	***35660***	***39153***	***3492***
Դրամ	16259	21983	20541	19706	22473	26656	33742	7086
Արտարժույթ	9355	9969	10071	8972	8969	9004	5411	-3593
Վճարվելիք հատուցումներ այդ թվում՝	91	99	106	168	145	227	188	-39
Վճարվելիք գումարներ միջնորդներին	104	293	211	241	271	440	566	126
Հետ վերադարձվող ապահովագրավճարներ	11	24	29	59	61	102	111	9
Համաապահովագրողներին վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ	1819	1189	1215	1254	1378	1217	1018	-198
Փոխառություններ և վարկեր	103	0	0	0	257	58	0	-58
Ապահովագրական պահուստներ այդ թվում՝	2917	13367	11187	9951	8619	15943	19979	4037
ՉԱՊ	1997	11459	8989	6779	5005	12267	16162	3895
Պահանջների պահուստներ	607	1586	1870	2817	2724	2793	2934	141
Մաթեմատիկական պահուստ	0	0	0	0	0	0	0	0
Այլ պահուստներ	312	322	328	355	890	883	883	0
Ռեպո համաձայնագրեր	0	567	913	1093	2623	2617	2360	-257
Այլ պարտավորություններ	8063	1362	1344	1399	4132	1508	1718	210
Ընդամենը պարտավորություններ	***13108***	***16901***	***15005***	***14165***	***17486***	***22111***	***25939***	***3828***
Դրամ	11762	16310	14716	13838	16733	21592	25677	4084
Արտարժույթ	1345	592	289	327	753	519	262	-256
Կանոնադրական կապիտալ	12116	13476	13476	11933	11933	12385	10604	-1781
Ընթացիկ ժամ.-ի չբաշխված շահույթ/վնաս	-979	1159	1767	2265	1683	-765	474	1238
Նախորդ ժամ.-ի չբաշխված շահույթ/վնաս	873	-85	-141	-97	-115	1545	1550	5
Այլ	496	501	504	411	455	385	587	202
Ընդամենը ընդհանուր կապիտալ	***12506***	***15051***	***15606***	***14513***	***13956***	***13549***	***13214***	***-336***

Աղյուսակ 2 *(մլն ՀՀ դրամ)*

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2010	31.03.2011	30.06.2011	30.09.2011	31.12.2011	31.03.2012	30.06.2012	Փոփոխություն (30.06.2012) - (31.03.2012)
Ապահովագրական գումարներ	3052439	6956056	5719808	5976982	3696072	6208708	7004384	795675
Ապահովագրավճարների համախառն մեծությունը	8253	12806	15393	18707	22372	12412	23835	11424
Վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարներ	4010	453	1165	1700	2803	782	1456	674
Ապահովագրական հատուցումների համախառն մեծությունը	1746	1275	2897	5206	8141	2970	5968	2998
Վերաապահովագրողի բաժինն ապահովագրական հատուցումներում	535	206	365	513	686	162	290	128

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2010	31.03.2011	30.06.2011	30.09.2011	31.12.2011	31.03.2012	30.06.2012	Փոփոխություն (31.03.2012) - (31.12.2011)
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ	**3196.2**	**3470.4**	**3753.1**	**3193.8**	**3230.0**	**3476.2**	**3148.0**	**246.3**
Չբաշխված շահույթ (վնաս), այդ թվում՝	416.9	649.9	717.7	869.9	801.9	838.7	348.2	36.8
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	295.8	252.3	478.2	602.8	566.4	46.1	-63.1	-520.3
Միջնորդավճարներ և եկամուտներ ՆԾ մատուցումից	24.4	240.0	449.1	463.3	1299.3	284.3	297.4	-1015.1
Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ	1560.5	917.2	1126.6	1575.3	2154.9	125.7	1057.6	-2029.1
Կանոնադրական կապիտալ	2514.8	2578.8	2728.8	2099.6	2099.6	2099.6	2499.6	0.0
Ընդհանուր պարտավորություններ	**16359.9**	**15128.5**	**18730.5**	**17989.5**	**18597.4**	**19745.2**	**19571.1**	**1147.8**
Ռեզիդենտ բանկերից ներգրաված վարկեր	2017.6	1458.0	2360.7	826.2	2318.7	3468.3	3505.8	1149.6
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով	13879.6	13370.7	15933.6	16839.6	15624.5	16023.7	15689.6	399.1
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ	**19556.1**	**18599.0**	**22483.6**	**21183.3**	**21827.4**	**23221.5**	**22719.1**	**1394.1**
Կանխիկ դրամական միջոցներ	200.2	208.0	8.1	13.3	5.9	8.4	7.7	2.5
Բանկային հաշիվներ	233.4	507.2	680.7	328.6	688.8	259.8	303.9	-429.0
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր	14180.6	13619.6	16160.3	17101.0	16330.6	15178.2	15899.0	-1152.5
Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր	0.0	0.0	29.0	18.9	19.6	0.0	0.0	-19.6
Պետական արժեթղթեր	1713.4	2416.3	3725.7	1411.3	2372.5	20981.8	20358.7	18609.2
Այլ արժեթղթեր	886.8	905.7	851.4	939.5	782.0	798.1	771.2	16.2

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՋԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011				2012	
	IV եռ.	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	I եռ.	II եռ.
ՆԲ կողմից կնքված գործարքներ	**114739.2**	**266369.1**	**510960.8**	**451313.5**	**322029.0**	**491050.8**	**696426.1**
բաժնային արժեթղթեր	547.6	2812.5	6185.9	6599.5	887.7	3849.8	2881.7
այդ թվում՝ բորսայական	-	3.2	46.0	7.3	8.3	-	103.4
կորպորատիվ պարտատոմսեր	242.3	4.0	970.5	126.9	18.9	22393.4	53564.8
այդ թվում՝ բորսայական	2.1	4.0	6.1	56.7	-	-	1080.0
պետական պարտատոմսեր	44284.7	81936.7	78201.0	84135.0	26797.7	87609.9	76943.7
այդ թվում՝ բորսայական	825.3	2824.2	670.1	3714.6	1593.8	1556.5	1281.5
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	69665	181616	425603	360452	294325	377198	563036
այդ թվում՝ բորսայական	621.0	435.7	709.5	472.8	29.8	93.3	66.6
ՆԸ կողմից կնքված գործարքներ	**23125.4**	**42851.4**	**55798.9**	**61415.4**	**22979.3**	**55437.1**	**59527.3**
բաժնային արժեթղթեր	49.4	388.6	343.3	601.1	25.8	208.5	38.4
այդ թվում՝ բորսայական	19.4	170.0	148.6	13.9	-	186.8	1.0
կորպորատիվ պարտատոմսեր	119.7	224.8	176.7	507.0	126.1	63.1	165.3
այդ թվում՝ բորսայական	119.7	203.0	176.7	380.8	111.1	63.1	165.3
պետական պարտատոմսեր	5121.8	5675.5	7517.6	6540.6	1965.0	5221.1	8151.9
այդ թվում՝ բորսայական	-	-	-	-	-	-	-
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	17834.4	36562.5	47761.3	53766.6	20862.4	49944.4	51171.8
այդ թվում՝ բորսայական	621.0	435.7	768.3	567.4	69.0	93.3	66.6

[1] *Ռեպո/հակադարձ ռեպո գործարքները չեն ներառում երկարաձգումները:*

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ (ՍՊԱՍԱՐԿՈՂ) ՔԱՐՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+	+	+		
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+	+		
Ամերիաբանկ	+	+	+		
ՎՏԲ-Հայաստան բանկ			+		
Հայէկոնոմբանկ	+	+	+		
Պրոմեթեյ բանկ	+	+			
ԲՏԱ բանկ	+	+			
Զարգացման հայկական բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+	+	+		
Ինեկոբանկ	+				
Մելլաթ բանկ	+				
Բիբլոս բանկ Արմենիա	+	+			
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+			+
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	+	+	+	+	
Արցախբանկ	+	+			
Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ	+	+	+		
Յունիբանկ	+		+		+
Արդշինինվեստ բանկ	+	+	+		
Արմսվիսբանկ					
ՊրոԿրեդիտ բանկ			+		
Համահայկական բանկ					

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(2012 թ. հունիսի 30-ի դրությամբ)

(հազար ՀՀ դրամ)

	30.06.2012	*31.03.2012*	*2011*
Ակտիվներ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամ	5,367,131	5,077,953	5,013,113
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	126,652,793	144,884,096	236,415,264
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	367,867,325	334,857,145	344,720,503
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	1,646	1,646	1,646
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	193,845,911	181,083,990	137,340,298
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	83,278,868	76,996,772	76,489,346
Այլ ակտիվներ	996,936	850,692	1,228,086
	778,010,610	**743,752,294**	**801,208,256**
Ակտիվներ տեղական արժույթով			
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	134,385,910	98,452,240	130,653,171
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	124,553,634	122,627,344	121,527,307
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	2,646,831	2,574,113	3,265,916
Հիմնական միջոցներ	51,174,781	43,832,509	38,365,916
Ոչ նյութական ակտիվներ	795,595	783,156	622,741
Այլ ակտիվներ	5,253,295	5,437,725	6,251,461
	318,810,046	**273,707,087**	**300,686,512**
Ընդամենը ակտիվներ	**1,096,820,656**	**1,017,459,381**	**1,101,894,768**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	41,440,280	33,821,978	104,346,523
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	2,825,099	3,567,937	3,974,934
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	3,722,338	1,581,317	1,771,245
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	321,963,162	313,133,657	306,460,839
Այլ փոխառություններ	48,208,210	43,195,677	38,846,294
Այլ պարտավորություններ	219,153	2,339,422	153,901
	418,378,242	**397,639,988**	**455,553,736**
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	384,034,939	361,559,125	398,777,362
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	171,856,385	166,554,428	169,195,008
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	105,204,284	92,628,885	75,722,418
Այլ պարտավորություններ	4,766,579	2,233,996	3,192,202
	665,862,187	**622,976,434**	**646,886,990**
Ընդամենը պարտավորություններ	**1,084,240,429**	**1,020,616,422**	**1,102,440,726**
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	17,389,049	17,389,049	17,389,049
Լրացուցիչ կապիտալ	107,531,884	107,531,884	107,531,884
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	(1,327,087)	(1,026,112)	(1,218,959)
Կուտակված շահույթ/վնաս	(111,113,619)	(127,151,862)	(124,347,932)
Ընդամենը սեփական կապիտալ	12,580,227	**(3,157,041)**	**(545,958)**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**1,096,820,656**	**1,017,459,381**	**1,101,894,768**

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2012 թվականի օգոստոսի 21-ին և ստորագրվել է:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

Հայաստանի Հանրապետության
միջազգային պահուստների վիճակը և կազմը

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին

2012 թ. 2-րդ եռամսյակ (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

Եռամսյակի սկիզբ	**ՀՓԻ**		**ԱՄՆ դոլար**
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,759,216,622.13
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,759,216,622.13
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	35,239,019.00		54,588,266.91
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Ձուլ արտաքին ակտիվներ			989,319,214.80
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			989,318,718.69

Եռամսյակի վերջ			
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,719,219,728.29
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,719,219,255.46
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	39,282,209.00		59,612,614.16
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Ձուլ արտաքին ակտիվներ			973,025,494.18
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			973,025,021.36

ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀ

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ[4]

Վիճակագրության վարչություն

Անուշ Դավթյան, Ալեքսանդր Պետրոսյան, Արմեն Գագիկյան

Վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը տվյալ երկրի և արտաքին աշխարհի միջև իրականացված տնտեսական բոլոր գործառնությունների վիճակագրական արտացոլումն են: Եթե վճարային հաշվեկշիռն արտացոլում է ժամանակի որոշակի միավորի ընթացքում՝ սովորաբար 1 տարում իրականացված գործառնությունները, ապա միջազգային ներդրումային դիրքն արտացոլում է նախկինում իրականացված բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքում արտաքին աշխարհի նկատմամբ ձևավորված երկրի ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ժամանակի որոշակի պահի դրությամբ:

Հայաստանի վճարային հաշվեկշիռը կազմվում է 1993 թվականից, իսկ միջազգային ներդրումային դիրքը՝ 1998 թվականից: Մինչև 2011 թվականը այդ աշխատանքները իրականացնում էր ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, իսկ սկսած 2011 թվականից՝ Հայաստանի արտաքին հաշիվների վիճակագրությունը կազմում է ՀՀ կենտրոնական բանկը: Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրությունը կազմվում է միջազգային չափանիշներին համապատասխան և համահունչ է միջազգային չափորոշիչներին[5], թեև շարունակական բարելավման կարիք ունի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2011 թվականի ընթացքում հիմնականում պահպանել են ՀՀ վճարային հաշվեկշռի՝ նախորդ տարիների զարգացումները: Մասնավորապես՝ արտահանման աճի տեմպը գերազանցել է ներմուծման աճի տեմպին, միևնույն ժամանակ, արձանագրվել է թե՛ գործոնային եկամուտների և թե՛ ընթացիկ տրանսֆերտների աճ՝ համապատասխանաբար 64.9%-ով և 28.4%-ով: Հարկ է նշել, որ ընթացիկ տրանսֆերտների աճը պայմանավորված է թե՛ պետական և թե՛ մասնավոր տրանսֆերտների աճով՝ համապատասխանաբար 74.3 և 85.6 մլն դոլարով: Ի տարբերություն նախորդ տարվա, որոշակի բարելավվել է ընթացիկ հաշվի պակասուրդը, և ՀՆԱ-ում կազմել է 10.9%՝ նախորդ տարվա 14.8%-ի փոխարեն, իսկ բացարձակ առումով՝ ընթացիկ հաշվի պակասուրդը նվազել է 265 մլն դոլարով: Այսպիսով, մոտ 2.2%-ով նվազել է «Ապրանքներ»

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

4 Նյութը յուրաքանչյուր տարի հրապարակվում է «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր» եռամսյա պարբերականում (սկսած 2000 թվականից, հիմնականում՝ 2-րդ եռամսյակի թողարկման մեջ):

5 Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ (5-րդ հրատարակություն, 1993թ.), Վճարային հաշվեկշռի կազմման ուղեցույց (1995թ.):

հոդվածի բացասական հաշվեկշիռը (ապրանքների և ծառայությունների ներմուծման աճը կազմել է 13.9%, այն դեպքում, երբ արտահանումն աճել է 24.3%-ով), իսկ աշխատուժից եկամուտների ու տրանսֆերտների զուտ ներհոսքի աճը կազմել է 33.1% (նախորդ տարի՝ 2% նվազում):

Աղյուսակ 1. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2010 - 2011 թթ. (մլն ԱՄՆ դոլար, վերլուծական ներկայացում)

Ցուցանիշներ	2010					2011				
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2010	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2011
Ընթացիկ հաշիվ	**-417**	**-368**	**-270**	**-319**	**-1373**	**-409**	**-335**	**-176**	**-189**	**-1108**
Ընթացիկ հաշիվ (առանց վերաներդրված եկամտի)	**-357**	**-313**	**-195**	**-250**	**-1115**	**-330**	**-285**	**-108**	**-148**	**-871**
Ապրանքներ	-471	-475	-509	-577	-2033	-463	-500	-523	-592	-2078
Արտահանում	224	295	304	352	1175	307	401	439	432	1580
Ներմուծում	-695	-771	-812	-930	-3208	-771	-901	-962	-1024	-3658
Ծառայություններ	-56	-60	-67	-59	-242	-66	-79	-77	-91	-312
Արտահանում	122	176	248	215	762	148	187	270	222	827
Ներմուծում	-179	-236	-315	-274	-1004	-214	-266	-346	-313	-1139
Եկամուտներ	6	58	148	127	339	-9	100	226	241	559
Եկամուտ աշխատուժից	81	159	252	279	771	100	224	338	391	1052
Եկամուտ ներդրումներից	-75	-101	-104	-152	-432	-108	-124	-112	-149	- 494
այդ թվում՝ վերաներդրված եկամուտ	-60	-55	-75	-69	-258	-79	-50	-68	-40	-237
Ընթացիկ տրանսֆերտներ	105	110	157	190	563	129	145	197	253	723
Պետական	15	16	29	25	86	18	24	58	60	160
Մասնավոր	89	94	128	165	477	110	121	139	193	563
Կապիտալի և ֆինանսական հաշիվ (առանց ԿԲ միջազգային պահուստների փոփոխության և ԱՄՀ վարկի օգտագործման)	**276**	**264**	**229**	**312**	**1082**	**305**	**280**	**368**	**223**	**1175**
Կապիտալի հաշիվ	20	24	30	34	108	26	24	24	21	96
Ֆինանսական հաշիվ	256	240	200	278	974	278	256	343	202	1079
Ուղղակի ներդրումներ	125	108	165	163	562	156	120	133	38	447
Պորտֆելային ներդրումներ	6	3	1	0	11	-10	-4	1	3	-10
Այլ ներդրումներ	125	128	33	115	401	133	140	209	161	642
Ակտիվներ	41	-1	-156	-129	-246	-34	-28	-107	80	-88
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0	1	-2	1	0	0	2	-2	-1	-1
Պետական հատված	-1	0	0	0	-2	-1	0	0	0	-1
Բանկեր	-36	10	-32	54	-5	-32	-12	-13	31	-26
Այլ հատվածներ	79	-11	-122	-185	-239	-1	-18	-92	50	-60
Պարտավորություններ	84	129	189	245	647	167	167	316	81	730
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-1	0	5	0	4	0	0	1	26	26
Պետական հատված[6]	63	47	42	43	194	22	33	69	28	153
Բանկեր	-10	28	134	105	257	111	131	234	27	502
Այլ հատվածներ	32	55	9	96	191	33	4	12	0	49
Հաշվեկշիռ	**-141**	**-104**	**-40**	**-7**	**-291**	**-104**	**-55**	**191**	**35**	**67**
ԿԲ միջազգային պահուստների փոփոխություն	**52**	**76**	**15**	**-31**	**111**	**77**	**56**	**-218**	**-48**	**-133**
ԱՄՀ վարկի օգտագործում	**74**	**15**	**29**	**44**	**162**	**1**	**-10**	**59**	**46**	**95**
Սխալներ և բացթողումներ	**15**	**13**	**-3**	**-7**	**18**	**27**	**9**	**-32**	**-33**	**29**

[6] Պետական հատվածի պարտավորությունների գումարից նվազեցվել են պետական հատվածի կողմից ստացված ԱՄՀ վարկի գումարները և ավելացվել են ԱՄՀ վարկի օգտագործմանը:


Կապիտալի հաշվում նախորդ տարվա համեմատ աճել են պետական տրանսֆերտները՝ 26.2 մլն դոլարով և կազմել են 63.5 մլն դոլար՝ պայմանավորված «Լինսի» և «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամների շրջանակներում միջոցների ներհոսքի ավելացմամբ: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ 37.9 մլն դոլարով նվազել են մասնավոր կապիտալ տրանսֆերտները: Նշված հոդվածների փոփոխության արդյունքում կապիտալի հաշիվը նվազել է 11.7 մլն դոլարով: Ֆինանսական հաշվում 2011 թվականի ընթացքում գրանցվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների 447.0 մլն դոլարի զուտ ներհոսք, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 20.4%-ով: Նշենք նաև, որ 2011 թվականի ընթացքում ավելացել են արտերկրներում կատարված ուղղակի ներդրումները՝ նախորդ տարվա 8.3 մլն դոլարի փոխարեն՝ 2011 թվականին կազմելով 78 մլն դոլար: Բանկային համակարգում տարվա ընթացքում աճել են ոչ ռեզիդենտներին տրամադրված և ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերը՝ համապատասխանաբար 17.7 մլն դոլարով և 291.5 մլն դոլարով: Տարվա ընթացքում մասնավոր հատվածի կողմից կանխիկ արտարժույթի զուտ կուտակված ծավալները կազմել են շուրջ 40.6 մլն դոլար: 2011 թվականին ավելացել են ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պահուստները՝ շուրջ 132.9 մլն դոլարով:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

Ապրանքների արտահանում

Ապրանքների արտահանումը (կրեդիտ) 2011 թվականին կազմել է 1580.0 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելացել է 34.4%-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ արտահանումն աճել է 32.9%-ով՝ նախորդ տարվա 61.8%-ի փոխարեն:

Գծապատկեր 1. Ապրանքների արտահանումը 2006 - 2011 թթ.[7]




Ընդ որում՝ 2011 թվականին «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են 97.4 մլն դոլարով կամ 31.7%-ով, «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբինը՝ 32.3 մլն դոլարով կամ 9.7%-ով, «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբինը՝ 62.4 մլն դոլարով կամ 46.5%-ով, «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբինը՝ 52.8 մլն դոլարով կամ 40.3%-ով:

Ի տարբերություն վերոնշյալ ապրանքախմբերի՝ արձանագրվել են նաև արտահանման ծավալների նվազումներ. հիմնականում նվազել է «Պլաստմասսա և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանումը (6.8 մլն դոլարով կամ 43.9%-ով):

[7] *Ապրանքների արտահանումը գրաֆիկում ներկայացված է ըստ ապրանքների արտաքին առևտրի վիճակագրության:*

Գծապատկեր 2. Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի



2002 թվականից արձանագրվել է մետաղական արտադրանքի և հանքանյութերի արտահանման ծավալների աճ, իսկ վերջին տարիներին դրանք կազմել են արտահանման ընդհանուր ծավալի կեսից ավելին (2011 թ.՝ ավելի քան 52%): 2011 թվականին մետաղները հիմնականում արտահանվել են Նիդեռլանդներ (արտահանվում է երկաթամիահալվածք և պղինձ), Բուլղարիա (արտահանվում է պղնձի հանքաքար), Գերմանիա (արտահանվում է պղինձ, երկաթամիահալվածք և մոլիբդեն), ԱՄՆ (արտահանվում է ալյումինի փայլաթիթեղ), Չինաստան (արտահանվում է պղնձի և մոլիբդենի հանքաքար) և Կանադա (արտահանվում է ոսկի):

Աղյուսակ 2. Հիմնական արտահանվող մետաղների տեսակները

Մետաղը	2009		2010		2011	
	Արժեք (մլն դոլար)	Տես. կշիռ արտահանման մեջ (%)	Արժեք (մլն դոլար)	Տես. կշիռ արտահանման մեջ (%)	Արժեք (մլն դոլար)	Տես. կշիռ արտահանման մեջ (%)
Պղինձ	164.0	23.1	310.3	29.8	380.7	28.5
որից՝ հանքաքար	*98.8*	*13.9*	*210.6*	*20.2*	*260.6*	*19.5*
Մոլիբդեն	20.6	2.9	19.3	1.9	26.4	2.0
որից՝ հանքաքար	*11.1*	*1.6*	*3.8*	*0.4*	*11.1*	*0.8*
Երկաթամիահալվածք	86.5	12.2	119.6	11.5	121.3	9.1
Ալյումին	60.3	8.5	83.3	8.0	91.2	6.8
Ոսկի	32.8	4.6	28.6	2.7	79.5	6.0
Ընդամենը արտահանում	**710.2**	**100.0**	**1041.1**	**100.0**	**1334.3**	**100.0**

2011 թվականին, 2010 թվականի համեմատ, ապրանքների արտահանումն ավելացել է 28.2%-ով (ըստ ապրանքների արտաքին առևտրի վիճակագրության), ընդ որում՝ ի հաշիվ գների աճի[5] 12.7%-ով, իսկ ֆիզիկական ծավալների աճի՝ 15.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում թանկարժեք քարերի, մետաղական և հանքահումքային արտադրանքների գների բարձրացմամբ: Արձանագրվել է գրեթե բոլոր ապրանքախմբերի գների և ֆիզիկական ծավալների աճ (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Արտահանման փոփոխությունը ի հաշիվ գնի և ծավալի (%) [8]

Ապրանքախումբ	2010			2011		
	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ կապված		Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ կապված	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**46.6**	**25.7**	**20.9**	**28.2**	**15.5**	**12.7**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն [9]	-40.6	-35.7	-4.9	27.3	14.0	13.3
Թանկարժեք քարեր և մետաղներ	27.6	27.1	0.5	46.5	3.5	43.0
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ [10]	97.7	66.0	31.7	26.9	8.0	18.9
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	43.8	12.8	31.0	9.7	7.3	2.4
Գյուղատնտեսական մթերքներ [11]	26.5	20.1	6.4	39.1	38.3	0.8
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ[12]	1.1	13.1	-12.0	84.8	76.3	8.5
Այլ ապրանքներ [13]	-3.9	10.6	-14.5	-5.1	-3.5	-1.6

Հարկ է նշել, որ «Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ» ապրանքախմբի արտահանման աճը հիմնականում պայմանավորված է պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանման աճով: «Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ» ապրանքախմբի արտահանման՝ նախորդ տարվա նկատմամբ աճը պայմանավորվել է այս ապրանքախմբում ներառված «Այլ թռչող ապարատներ», «Ռադիոսարքի և հեռուստացույցի բաղադրիչ մասեր», «Ներքին այրման շարժիչ՝ կայծային բռնկումով» ապրանքախմբերի՝ 2010 թ. արտահանման համեմատ կտրուկ աճով:

Ինչպես նախորդ տարիներին, արտահանման ապրանքային բևեռացման ցուցանիշը[14] շարունակել է մնալ բարձր: Այսպես. 4 հիմնական ապրանքախմբերը՝ «Պատրաստի սննդի արտադրանք», «Հանքահումքային մթերք», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», կազմել են 2011 թ. ամբողջ արտահանման ավելի քան 86%-ը: Ընդ որում՝ արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման ցուցանիշը 2011 թվականին որոշակիորեն նվազել է՝ կազմելով 45.8%, ինչը, թերևս, պայմանավորված է արտահանման մեջ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի տեսակարար կշռի նվազմամբ (2010 թ. կազմել է 31.9%, 2011 թ.՝ 27.3%):

Աղյուսակ 4. Արտահանման ապրանքային բևեռացումը (%)

Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
Ապրանքային բևեռացում	45.5	43.7	43.7	44.0	47.3	45.8

ԱՊՀ անդամ երկրներ արտահանվող ապրանքների ծավալներն ավելացել են 69.3 մլն դոլարով: Զգալիորեն ավելացել է ապրանքների արտահանումը Ռուսաստանի Դաշնություն՝ 61.8 մլն դոլարով (հիմ-


[8] *Գների հաշվարկն իրականացվել է ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից:*
[9] *Ներառում է «Մանածագործական իրեր», «Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ», «Կաշվե հումք, մորթի, կաշի և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը:*
[10] *Ներառում է «Հանքահումքային մթերքներ», «Քիմիական արտադրության ապրանքներ», «Պլաստմասսա, կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբերը:*
[11] *Ներառում է «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», «Բուսական ծագման արտադրանք», «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր», «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը:*
[12] *Ներառում է «Մեքենաներ և սարքավորումներ», «Տրանսպորտային միջոցներ», «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերը:*
[13] *Ներառում է «Փայտ և փայտյա իրեր», «Թուղթ և թղթյա իրեր», «Կահույք և խաղալիքներ», «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերը:*
[14] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100, \text{ որտեղ՝}$$

K-ն բևեռացման գործակիցն է, x_i-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալը, X–ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը: Մեկ ապրանքի արտահանման (ներմուծման) դեպքում ցուցանիշը հավասար կլինի 100%-ի. որքան ապրանքախմբերի թվաքանակը մեծ է, այնքան բևեռացման ցուցանիշը փոքր է:

նականում արտահանվում են ոգելից խմիչք, ադամանդ, մեքենաներ ու սարքավորումներ, ոսկերչական իրեր և մրգեր) և Բելառուս՝ 1.4 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է ոգելից խմիչք): Այլ երկրներ արտահանման ծավալներն ավելացել են 224.0 մլն դոլարով, որից 106.3 մլն դոլարով՝ արտահանումը Եվրոմիության երկրներ: Զգալիորեն աճել է ապրանքների արտահանումը դեպի Իսպանիա՝ 67.3 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է պղնձի հանքաքար), Կանադա՝ 40.9 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է անմշակ ոսկի), Իրան՝ 21.4 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է էլեկտրաէներգիա), Նիդեռլանդներ՝ 18.6 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է երկաթամիահալվածք և պղինձ), Գերմանիա՝ 25.4 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է պղինձ, երկաթամիահալվածք և մոլիբդեն), ԱՄՆ՝ 18.0 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է ալյումինե փայլաթիթեղ): Միևնույն ժամանակ, նվազել են արտահանման ծավալները Չինաստան՝ 14.6 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է մոլիբդենի և պղնձի հանքաքար), Բուլղարիա՝ 4.3 մլն դոլարով (հիմնականում արտահանվում է պղնձի հանքաքար) և Թուրքմենստան 4.2 մլն դոլարով (հիմնականում արտահանվում են ոսկերչական իրեր):

Գծապատկեր 3. Արտահանման կառուցվածքն ըստ հիմնական երկրների (2011 թ.)



2011 թվականին, նախորդ տարվա համեմատ, 1.1%-ով նվազել է արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը[15] և կազմել է 29.6%՝ նախորդ տարվա 30.7%-ի փոխարեն:

Աղյուսակ 5. Արտահանման աշխարհագրական բևեռացումը ըստ ապրանքի ծագման երկրի (%)

Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
Աշխարհագրական բևեռացում	30.1	30.7	32.7	29.6	30.7	29.6

Ապրանքների ներմուծում

2011 թվականին ապրանքների ներմուծումը (դեբետ) կազմել է 3657.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 14.0%-ով: Տարվա ընթացքում աճ է գրանցվել գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով: Մասնավորապես՝ 155.5 մլն դոլարով կամ 23.4%-ով ավելացել են «Հանքահումքային մթերքներ», 73.1


[15] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K=\frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100$$ *որտեղ՝*

K-ն բևեռացման գործակիցն է,
X_i-ը՝ արտահանման (ներմուծման) ծավալն է i երկիր,
X –ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:

մլն դոլարով կամ 24.6%-ով՝ «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», 56.0 մլն դոլարով կամ 35.3%-ով՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր», 39.1 մլն դոլարով կամ 12.7%-ով՝ «Պատրաստի սննդի արտադրանք», 37.8 մլն դոլարով կամ 30.8%-ով՝ «Մանածագործական իրեր», 24.6 մլն դոլարով կամ 16.7%-ով՝ «Պլաստմասսա և դրանից իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալները:

Գծապատկեր 4. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի



2011 թվականին, 2010 թվականի համեմատ, ներմուծումն ավելացել է 10.6%-ով (ըստ առևտրի վիճակագրության), ընդ որում՝ ֆիզիկական ծավալների ավելացման հաշվին՝ 5.8%, իսկ գների փոփոխության հաշվին՝ 4.8%: Արձանագրվել է գրեթե բոլոր ապրանքախմբերի գների և ֆիզիկական ծավալների աճ (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Ներմուծման փոփոխությունն ի հաշիվ գնի և ծավալի (%) [16]

Ապրանքախումբ	2010			2011		
	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված		Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**12.9**	**13.6**	**-0.7**	**10.6**	**5.8**	**4.8**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն [7]	34.2	45.0	-10.8	25.8	30.9	-5.1
Թանկարժեք քարեր և մետաղներ	48.0	51.5	-3.5	35.3	8.9	26.4
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ [8]	17.3	10.7	6.6	18.3	6.9	11.4
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	-2.0	-2.8	0.8	-11.4	-2.4	-9.0
Գյուղատնտեսական մթերքներ [9]	10.1	12.3	-2.2	16.0	8.1	7.9
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ [10]	10.1	17.1	-7.0	-2.2	2.3	-4.5
Այլ ապրանքներ [11]	8.0	15.8	-7.8	21.2	20.7	0.5

[16] *Ներմուծման գները ՀՀ ԿԲ-ն հաշվարկել է ըստ «ապրանքի ծագման երկրի» հատկանիշի կազմված տվյալների:*


Զգալի աճ է արձանագրվել «Թանկարժեք քարեր և մետաղներ» ապրանքախմբի մասով, ընդ որում՝ 35.3% աճի 26.4%-ը պայմանավորվել է գների, իսկ 8.9%-ը՝ ֆիզիկական ծավալների աճով: Սա բացատրվում է նրանով, որ այս ապրանքախմբում մեծ կշիռ ունեցող ադամանդե քարերի և անմշակ ոսկու ներմուծման ծավալները և գները զգալիորեն աճել են: «Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ» ապրանքախմբի ներմուծման աճը պայմանավորվել է գլխավորապես «Բնական և հեղուկ գազ», «Նավթ և նավթամթերք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների և գների աճով:

Ի տարբերություն արտահանման, ներմուծվող ապրանքախմբերի ցրվածությունն ավելի մեծ է: Այդ է վկայում նաև արտահանման նկատմամբ ներմուծման համեմատաբար ցածր բևեռացման ցուցանիշը, ինչը նախորդ տարվա համեմատությամբ գրեթե չի փոխվել և կազմել է 31.1%: Բևեռացման ցածր ցուցանիշը հետևանք է այն բանի, որ տարիների ընթացքում ավելանում է Հայաստան ապրանքներ ներմուծող գործընկեր երկրների թիվը՝ նվազեցնելով երկրի կախվածությունն այս կամ այն երկրի անբարենպաստ տնտեսական միջավայրի հնարավոր ազդեցություններից:

Աղյուսակ 7. Ներմուծման ապրանքային բևեռացումը (%) [12]

Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
Ապրանքային բևեռացում	31.3	31.0	30.5	32.0	31.7	31.1

Գծապատկեր 5. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքի ծագման հիմնական երկրների (2011 թ.)



Ըստ «Ներմուծվող ապրանքների ծագման երկրի» հատկանիշի՝ ԱՊՀ անդամ երկրներից ներմուծումն ավելացել է 66.7 մլն դոլարով: Հիմնականում ներմուծումն ավելացել է Ռուսաստանի Դաշնությունից՝ 55.6 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են բնական և հեղուկ գազ, չմշակված ալյումին, ցորեն, նավթ ու նավթամթերք), Ուկրաինայից՝ 2.5 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են երկաթյա ձողեր, ցորեն, արևածաղկի ձեթ, սպիրտային խմիչք), Ղազախստանից՝ 13.4 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են երկաթյա հարթ գլանվածքներ և ցորեն): ԱՊՀ մնացած երկրներից ներմուծվող ապրանքների ծավալները նվազել են: Եվրոմիության անդամ երկրներից ներմուծումն ավելացել է. Իտալիայից՝ 47.5 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են ջեռուցման կաթսաներ, բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներ, գործվածքեղեն, կահույք), Գերմանիայից՝ 34.4 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են դեղամիջոցներ, բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներ, հեռախոսային ու հեռագրային ապարատներ, մոդեմներ), Բուլղարիայից՝ 19.3 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում է նավթ և նավթամթերք), Իսպանիայից՝ 15.6 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են բանջարեղենային պահածոներ, կերամիկական արտադրանք, դեղորայք): Ավելացել է նաև ներմուծումը ԱՄՆ-ից՝ 36.6 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են ընտանի թռչնի միս, մսամթերք, ավտոուղեհարթիչ, միաշերեփ բեռնիչ, տոփանիչ, բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներ), Իրանից՝ 16.9 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են բնական և հեղուկ գազ, նավթավերամշակումից ստացված մնացուկ, նավթ ու նավթամթերք) և Թուրքիայից՝ 29.9 մլն դոլարով (հիմնականում

ներմուծվում են մանածագործական իրեր, քիմիական արտադրության ապրանքներ և փայտյա իրեր): Միևնույն ժամանակ, նվազել է ներմուծումը Շվեդիայից՝ 17.8 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են հեռախոսային և հեռագրային ապարատներ, օծանելիք և հիգիենայի պարագաներ), Կորեայի Հանրապետությունից՝ 15.2 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում են մարդատար ավտոմեքենաներ, հեռախոսային և հեռագրային ապարատներ, մոդեմներ), Ռումինիայից՝ 10.2 մլն դոլարով (հիմնականում ներմուծվում է նավթ և նավթամթերք)[17]:

2011 թվականին, ըստ «ապրանքի ծագման երկրի» հատկանիշի, ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը նախորդ տարվա համեմատ մի փոքր նվազել է և կազմել 27.6%, միևնույն ժամանակ համապատասխան ցուցանիշը, հաշվարկված առևտուր անող երկրի հատկանիշի տվյալների հիման վրա, մնացել է անփոփոխ և կազմել է 24.8%:

Աղյուսակ 8. Ներմուծման աշխարհագրական բևեռացումն ըստ «ապրանքի ծագման երկրի» հատկանիշի (%) [13]

Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
Աշխարհագրական բևեռացում	23.6	27.9	26.3	29.1	28.5	27.6

Աղյուսակ 9. Ներմուծման աշխարհագրական բևեռացումն ըստ առևտուր անող երկրի հատկանիշի (%) [13]

Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
Աշխարհագրական բևեռացում	24.9	25.1	24.7	24.4	24.8	24.8

Հայաստանում ներմուծման միջին հակվածության ցուցանիշը՝ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը, 2011 թվականին աճել է՝ պայմանավորված դոլարային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի աճի տեմպերի նկատմամբ ապրանքների և ծառայությունների ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով: Ընդ որում՝ դոլարային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի աճը կազմել է 9.5%, իսկ դրամային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի անվանական աճը՝ 4.7%:

Աղյուսակ 10. Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը (%)

Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
Ներմուծման միջին հակվածություն	39.7	39.0	40.7	42.6	45.5	47.3

Աղյուսակ 11. Արտահանման ու ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի օգտագործման ուղղությունների [18]

Ապրանքախումբ	Ծավալ, մլն դոլար				Տեսակարար կշիռ,%			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Սպառողական ապրանքներ	38.6	50	540.4	580.7	3.8	3.8	14.9	14.6
Մթերք և խմիչքներ	147.9	206.4	548.3	646.8	14.5	15.7	15.1	16.3
Արդյունաբերական պաշարներ	725.7	884.2	1060.8	1176.8	71.0	67.4	29.3	29.6
Վառելիք և վառելանյութ	71	106.8	638.2	793.8	6.9	8.1	17.6	20.0
Կապիտալ ապրանքներ	35.7	34.4	609.2	519.4	3.5	2.6	16.8	13.1
Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր	2.7	29.7	226.8	256	0.3	2.3	6.3	6.4
Այլ ապրանքներ	0	0	0.3	0.3	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը	**1021.7**	**1311.4**	**3624.0**	**3973.9**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**

[17] Նշված երկրներից ապրանքների ներմուծումը հաշվարկված է ըստ « ծագման երկրի» հատկանիշի կազմված տվյալների:

[18] Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ցուցանիշներում քաղաքացիների կողմից իրականացված առևտուրն ընդգրկված չէ: Քաղաքացիների կողմից կատարված առևտրում հատկապես մեծ տեսակարար կշիռ ունի մարդատար ավտոմեքենաների ներմուծումը:


Ապրանքների հաշվեկշիռ

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2011 թվականին կազմել է մոտ 5237.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 19.5%-ով: Ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 2077.6 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2.2%-ով, իսկ առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ ապրանքաշրջանառությունը կազմել է 4385.4 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12.7%-ով, ապրանքների հաշվեկշռի պակասուրդը՝ 2168.9 մլն դոլար:


Ծառայությունների հաշվեկշիռ

2011 թ. ընթացքում «Ծառայություններ» հոդվածի պակասուրդը ավելացել է 28.9%-ով՝ կազմելով 312.1 մլն դոլար (նախորդ տարի՝ 242.2 մլն դոլար): «Ծառայություններ» հոդվածի բացասական հաշվեկշռի նվազումը հիմնականում պայմանավորված է համակարգչային ու տեղեկատվական ծառայությունների և կապի ծառայությունների դրական հաշվեկշիռների՝ համապատասխանաբար 7.1 մլն և 12.5 մլն դոլար նվազումով, ինչպես նաև «Ճանապարհորդություն» հոդվածի բացասական մնացորդի աճով: Թերևս, վերջինս գլխավորապես պայմանավորված է Հայաստանի սեզոնային աշխատողների և զբոսաշրջիկների կողմից արտերկրներում ստացված ծառայությունների ծավալի աճով:

Գծապատկեր 6. Արտահանվող ծառայությունների տեսակարար կշիռները 2006 - 2011 թթ., %



Գծապատկեր 7. Ներմուծվող ծառայությունների տեսակարար կշիռները 2006 - 2011 թթ., %



2011 թվականին Հայաստանում շուրջ 5%-ով աճել է տնտեսության բացվածության ցուցանիշը[19] և կազմել է 71.1%: Ցուցանիշի նման աճը հիմնականում պայմանավորված է դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի համեմատ ապրանքների ու ծառայությունների արտաքին շրջանառության առաջանցիկ աճի տեմպերով, առավելապես՝ արտահանման միջին հակվածության ցուցանիշի առաջանցիկ աճով:

Աղյուսակ 12. Տնտեսության բացվածության ցուցանիշը (%)

Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010	2011
Բացվածության ցուցանիշ	**63.4**	**58.3**	**55.8**	**58.1**	**66.4**	**71.1**
արտահանման միջին հակվածություն	23.7	19.3	15.1	15.5	20.9	23.7
ներմուծման միջին հակվածություն	39.7	39.0	40.7	42.6	45.5	47.3


Տնտեսության բացվածության ցուցանիշի առանձին բաղադրատարրերի՝ արտահանում/ՀՆԱ *(արտահանման միջին հակվածություն)* և ներմուծում/ՀՆԱ *(ներմուծման միջին հակվածություն)* ցուցանիշների ուսումնասիրությունը հնարավորություն են տալիս հասկանալու, թե ցուցանիշի ժամանակագրական շարքի փոփոխությունը կոնկրետ որ բաղադրատարրով է պայմանավորված:

Եկամուտների հաշվեկշիռ

2011 թվականին «Եկամուտներ» հոդվածի հավելուրդը կազմել է 558.5 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 219.9 մլն դոլարով: Աճի պատճառ է հանդիսացել արտերկրում գտնվող սեզոնային աշխատողների եկամուտների ավելացումը 281.5 մլն դոլարով: 2011 թ. ընթացքում պաշտոնական պահուստների կառավարումից ստացվող եկամուտները կազմել են 31.7 մլն դոլար:

«Եկամուտներ» հոդվածի՝ դեպի դուրս փոխանցումների մեջ, ինչպես վերջին տարիներին, 2011 թվականին ևս զգալի են եղել ուղղակի ներդրմամբ ձեռնարկություններում ոչ ռեզիդենտների կողմից ստացված և վերաներդրված եկամուտները (236.7 մլն դոլար): Ուղղակի ներդրումներից եկամուտների արտահոսքի մեջ այս տարի, ինչպես և նախորդ տարի, նկատվել է աճ «Շահաբաժիններ» հոդվածում՝ 14.1 մլն դոլարով, ինչպես նաև աճել են միջֆիրմային վարկերի դիմաց վճարված տոկոսավճարները՝ անցյալ տարվա 4 մլն դոլարի փոխարեն 2011-ին կազմել են 22 մլն դոլար: 2011 թվականին ՀՀ առևտրային բանկերի ներգրավված պարտավորությունների (և՛ վարկերի, և՛ ավանդների) աճին զուգընթաց ավելացել են նաև դրանց դիմաց վճարված տոկոսավճարները՝ նախորդ տարվա 54.3 մլն դոլարից հասնելով 76.7 մլն դոլարի:

Գրաֆիկ 8. Եկամուտների հաշվեկշռի դինամիկան



[19] *Բացվածության ցուցանիշը = (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալների գումար (արտաքին առևտրի շրջանառություն)/ ՀՆԱ x 100):*

Ընթացիկ պետական տրանսֆերտներ

Պետական ընթացիկ տրանսֆերտների ներհոսքը 2011 թվականին կազմել է 164.5 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 83.8%-ով, իսկ արտահոսքը մնացել է գրեթե անփոփոխ՝ մոտ 4 մլն դոլար: Այսպիսով, պետական զուտ ընթացիկ տրանսֆերտները 2011 թվականին կազմել են 160.3 մլն դոլար (անցյալ տարի՝ 85.8 մլն դոլար), ընդ որում՝ աճը մեծամասամբ պայմանավորված է ֆինանսական օգնության ստացմամբ (նախորդ տարվա համեմատ աճել է 63.3 մլն դոլարով): Միևնույն ժամանակ, մարդասիրական օգնությունը կազմել է 50.5 մլն դոլար, իսկ տեխնիկական օգնությունը՝ 35.8 մլն դոլար:

Դրամական փոխանցումներ

2011 թվականին ՀՀ բանկային համակարգով ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների ներհոսքը կազմել է 1547.0 մլն դոլար, իսկ արտահոսքը՝ 264.6 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ներհոսքն ավելացել է 19.6%-ով, իսկ արտահոսքը՝ 19.3%-ով): Փոխանցումների ինչպես ներհոսքում, այնպես էլ արտահոսքում զգալի կշիռ ունեն Ռուսաստանն ու ԱՄՆ-ն. ներհոսքում՝ համապատասխանաբար 83.7% և 4.8%, իսկ արտահոսքում՝ 53.4% և 10.3%:

2011 թվականին ՀՀ բանկային համակարգով ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների ներհոսքի մեկ փոխանցման միջին գումարը կազմել է 649 դոլար (նախորդ տարի՝ 671 դոլար), արտահոսքինը՝ 1574 դոլար (նախորդ տարի՝ 1537 դոլար): Ըստ որում, ոչ առևտրային նպատակով ստացված փոխանցումների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 24%-ով, իսկ արտահոսքի քանակը՝ 17%-ով:

Աղյուսակ 13. 2009-2011 թվականներին ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումները ըստ երկրների (հազ. ԱՄՆ դոլար)


Երկիր	2009			2010			2011		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստան	904011	99524	804487	1062266	116950	945316	1295163	141352	1153811
ԱՄՆ	59288	23332	35956	67789	24554	43235	74380	27331	47049
Ուկրաինա	22418	10401	12017	19290	13433	5857	25076	16202	8874
Ղազախստան	17517	954	16563	18434	1021	17414	20611	1769	18842
Գերմանիա	11178	4276	6902	10586	5346	5240	10695	6905	3790
Իսպանիա	6839	1893	4946	7232	2286	4946	7674	3052	4622
Ֆրանսիա	7194	2849	4345	9443	3731	5712	10874	7668	3206
ԱՄԷ	4769	7704	(2935)	3581	6904	(3323)	3387	7660	(4273)
Չինաստան	554	5789	(5235)	789	5970	(5181)	529	8748	(8219)
Թուրքիա	1953	6005	(4052)	1182	6246	(5064)	2136	4981	(2845)
Այլ երկրներ	88398	32155	56243	93144	35323	57821	96434	38934	57499
Ընդամենը	*1124119*	*194884*	*929235*	*1293736*	*221763*	*1071973*	*1546959*	*264602*	*1282357*

Աղյուսակ 14. Մասնավոր հատվածի ընթացիկ տրանսֆերտների և սեզոնային աշխատողների աշխատավարձի (զուտ) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)

Երկիր	2006	2007	2008	2009	2010	2011
Հայաստան	16.6	15.5	15.6	14.8	13.5	15.9

ՀՀ վճարային հաշվեկշռի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները, ինչպես և նախկինում, 2011 թվականին ևս հանդիսացել են «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ: Ընդ որում՝ նշված հոդվածների միջոցով ֆինանսավորվել է ապրանքների ու ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի 53.6%-ը (նախորդ տարի՝ 39.6%-ը):

Գրաֆիկ 9. Ընթացիկ հաշվի տարրերը



2011 թվականին նախկին ԽՍՀՄ երկրների մեծ մասում արձանագրվել է ընթացիկ հաշիվ/ ՀՆԱ հարաբերակցության վատթարացում: Մասնավորապես՝ Լատվիայում և Լիտվայում, ի տարբերություն նախորդ տարիների, 2011 թվականին ընթացիկ հաշիվը դարձել է բացասական, որի հետևանքով տեղի է ունեցել ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցության կտրուկ նվազում: Որոշակի դրականացման միտում է արձանագրվել Ղազախստանի և Ռուսաստանի ընթացիկ հաշիվ/ ՀՆԱ հարաբերակցություններում:

Աղյուսակ 15. Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը նախկին ԽՍՀՄ երկրներում (%)

Երկիր	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ադրբեջան	1.3	17.7	27.3	33.7	23.6	29.0	27.0
Էստոնիա	-10.1	-15.6	-15.9	-9.1	3.4	2.9	2.1
Լատվիա	-12.3	-22.7	-22.5	-13.1	8.6	3.0	-1.2
Լիտվա	-7.1	-10.7	-14.6	-13.3	4.7	1.5	-1.6
Հայաստան	-1.1	-1.8	-6.4	-11.8	-15.8	-14.8	-10.9
Ղազախստան	-1.8	-2.5	-7.9	4.7	-3.6	1.6	7.6
Ղրղզստան	-1.6	-10.1	-6.0	-14.0	-2.3	-7.5	-6.4
Մոլդովա	-8.3	-11.3	-15.2	-16.2	-8.6	-7.9	-11.5
ՌԴ	11.1	9.6	6.0	6.2	4.0	4.8	5.3
Վրաստան	-11.1	-16.2	-20.9	-24.6	-11.6	-11.4	-12.5
Ուկրաինա	2.9	-1.5	-3.7	-7.1	-1.5	-2.2	-5.5
Միջին	**-3.5**	**-5.9**	**-7.3**	**-5.9**	**0.1**	**-0.1**	**-0.7**

Ընդհանրապես, ընթացիկ հաշվի բացասական մեծության վրա նաև ազդում է նախկինում կատարված օտարերկրյա ներդրումների դիմաց ստացված և վերաներդրված եկամուտների աճը, ինչը թեև փաստացի հոսք չի ենթադրում և պարզապես հաշվարկային մեծություն է, սակայն ազդում է ընթացիկ հաշվի պակասուրդի մեծության վրա, քանի որ, ըստ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության,

այն գրանցվում է «Եկամուտներ» հոդվածում, որի հակառակ գրանցումն արտացոլվում է ֆինանսական հաշվի «Ուղղակի ներդրումներ» բաժնում: Այսինքն՝ քանի որ նշված միջոցներն իրականում դուրս չեն գալիս երկրից, կարելի է ընթացիկ հաշվի պակասուրդը դիտարկել նաև առանց նշված՝ «Վերաներդրված եկամուտ» հոդվածի, քանի որ այն երկրներում, որտեղ օտարերկրյա ներդրումներն ու դրանցից ստացված եկամուտները զգալի են, բնականաբար զգալիորեն փոխվում է ընթացիկ հաշվի պակասուրդի մեծությունը, և առաջանում է ընթացիկ հաշվի պակասուրդի «ուռճացման» խնդիր:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ վերլուծական նպատակներով կարելի է որպես ընթացիկ հաշվի պակասուրդ դիտարկել առանց վերաներդրված եկամտի ընթացիկ հաշվի պակասուրդը:

Աղյուսակ 16. Հայաստանում վերաներդրված եկամուտները (մլն դոլար) և ընթացիկ հաշվի (առանց վերաներդրված եկամտի) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)


Ցուցանիշներ	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Վերաներդրված եկամուտ, մլն դոլար	155.2	193.9	250.2	208.1	265.1	258.3	237.2
Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	-1.1	-1.8	-6.4	-11.8	-15.8	-14.8	-10.9
Ընթացիկ հաշվի (առանց վերաներդրված եկամտի) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	2.1	1.2	-3.7	-10.1	-12.8	-12.0	-8.6

Ըստ աղյուսակ 16-ում ներկայացված տվյալների՝ Հայաստանում զգալի են վերաներդրված եկամտի չափերը, ինչը բացառելու դեպքում նկատվում է ընթացիկ հաշվի պակասուրդի զգալի կրճատում, իսկ 2005 - 2006 թվականներին՝ արդեն նույնիսկ հավելուրդ: 2007 թվականից սկսած՝ առանց վերաներդրված եկամտի ընթացիկ հաշիվը կրկին բացասական է դարձել՝ պայմանավորված ներմուծման աճի բարձր տեմպերով: 2011 թ. միայն ապրանքների ներմուծումը կազմել է ընթացիկ հաշվի ընդհանուր արտահոսքի մոտ 63.6%-ը (նախորդ տարի՝ մոտ 63.5%-ը):

ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

2011 թվականին կապիտալի և ֆինանսական հաշիվը կազմել է 1137.5 մլն դոլար (նախորդ տարի՝ 1355.7 մլն դոլար): Ֆինանսական հաշիվը նվազել է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ և կազմել է 1040.8 (նախորդ տարի՝ 247.8): Կապիտալի և ֆինանսական հաշիվը (առանց պահուստների) ամբողջությամբ ծածկել է ընթացիկ հաշվի պակասուրդը, ինչպես նաև համալրել է կենտրոնական բանկի պահուստները 132.9 մլն դոլարով:

Գրաֆիկ 10. ՀՀ վճարային հաշվեկշռի կապիտալի ու ֆինանսական հաշվի բաղադրատարրերը 2007 - 2011 թվականներին



ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ

Կապիտալի հաշվի հիմնական բաղադրատարր հանդիսացող կապիտալ տրանսֆերտները տարվա ընթացքում կազմել են 96.2 մլն դոլար: Հարկ է նշել, որ պետական տրանսֆերտները տարվա ընթացքում աճել են 26.2 մլն դոլարով (70.1%-ով), միևնույն ժամանակ 37.9 մլն դոլարով (53.6%-ով) նվազել են մասնավոր կապիտալ տրանսֆերտները, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալ տրանսֆերտները նախորդ տարվա համեմատ նվազել են 10.8%-ով կամ 11.7 մլն դոլարով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Որպես վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի առանձնահատկություն կարելի է նշել 2011 թվականին, նախորդ տարվա համեմատ, ուղղակի ներդրումների ծավալների նվազումը, ինչպես նաև այլ ներդրումների և պահուստային ակտիվների աճը՝ նշված հոսքերը համապատասխանաբար կազմել են 447.0, 737.1 և 132.9 մլն դոլար:


Աղյուսակ 17. Ֆինանսական հաշվի կառուցվածքը (ծավալը՝ մլն դոլար)

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011
Ուղղակի ներդրումներ (զուտ)	925.2	724.8	561.8	447.0
Պորտֆելային ներդրումներ (զուտ)	8.4	-3.9	10.7	-10.4
Այլ ներդրումներ (զուտ)	53.3	1139.8	563.7	737.1
Պահուստային ակտիվների փոփոխություն	233.5	-600.3	111.5	-132.9
Ընդամենը	1220.4	1260.4	1247.8	1040.8

Ուղղակի ներդրումներ

2011 թվականին ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ նվազել է 114.9 մլն դոլարով (20.4%-ով) և կազմել 447.0 մլն դոլար: Արտերկրներում ուղղակի ներդրումների ծավալներն ավելացել են 78 մլն դոլարով, միևնույն ժամանակ 525.0 մլն դոլարով ավելացել են Հայաստանում կատարված ուղղակի ներդրումները: Ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումները կազմել են 159.0 մլն դոլար (նախորդ տարի՝ 143.2 մլն դոլար), 237.2 մլն դոլարը նախկինում կատարված ուղղակի ներդրումների արդյունքում ձեռնարկություններում վերաներդրված շահույթն է (նախորդ տարի կազմել էր 258.3 մլն դոլար), միևնույն ժամանակ 128.8 մլն դոլարով աճել են միջֆիրմային վարկերը (նախորդ տարի աճը կազմել էր 168.6 մլն դոլար): Միջֆիրմային վարկերի աճը պայմանավորված է ուղղակի ներդրողի նկատմամբ պարտավորությունների՝ 266.8 մլն դոլար աճով և ուղղակի ներդրողներից պահանջների՝ 138 մլն դոլար աճով: 2011 թվականին բանկային համակարգում ուղղակի ներդրումներն ավելացել են 81.8 մլն դոլարով՝ նախորդ տարվա 117.6 մլն դոլարի փոխարեն:

Գրաֆիկ 11. Զուտ ուղղակի ներդրումները 2007 - 2011 թթ.



Ուղղակի ներդրումները տարվա ընթացքում իրականացվել են հիմնականում Ռուսաստանի և Ֆրանսիայի ներդրողների կողմից (ուղղակի ներդրումների համապատասխանաբար 53.6%-ը և 15.9%-ը): Ընդ որում՝ Ռուսաստանն ուղղակի ներդրումներն իրականացրել է հիմնային մետաղների արտադրության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, հեռահաղորդակցության, ինչպես նաև ցամաքային տրանսպորտի գործունեության և խողովակաշարերով փոխադրման ոլորտներում (համապատասխանաբար 40.1%-ը, 28.7%-ը, 15.7%-ը և 12.9%-ը): Ֆրանսիան ուղղակի ներդրումներ է կատարել հեռահաղորդակցության և խմիչքների արտադրության ճյուղերում (համապատասխանաբար 74.7%-ը և 23.8%-ը):

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2011 թվականին, 2010 թվականի համեմատությամբ, բավականին տարբերվել է ըստ երկրների: Ուղղակի ներդրումների ներհոսքի էական նվազում է արձանագրվել Էստոնիայում (83.9%-ով) և մի փոքր նվազում՝ Հայաստանում (7.9%-ով): Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատությամբ՝ ուղղակի ներդրումների ներհոսքի էական աճ է արձանագրվել Լատվիայում (մոտ 4 անգամ), Լիտվայում (65%-ով), Ղրղզստանում (58.5%-ով) և Մոլդովայում (38.8%-ով):

Աղյուսակ 18. Ուղղակի ներդրումներ (հաշվետու երկրում) / ՀՆԱ հարաբերակցությունը նախկին ԽՍՀՄ երկրներում (%)

Երկիր	2006	2007	2008	2009	2010	2011
Ադրբեջան	21.3	13.0	8.2	6.7	6.5	7.0
Էստոնիա	10.9	12.4	7.2	9.6	8.4	1.2
Լատվիա	8.3	8.1	3.8	0.4	1.6	5.5
Լիտվա	6.1	5.2	4.2	0.0	2.1	2.9
Հայաստան	7.1	7.6	8.0	9.0	6.2	5.2
Ղազախստան	7.8	10.6	10.7	11.5	7.3	6.9
Ղրղզստան	6.4	5.5	7.5	4.1	9.5	11.7
Մոլդովա	7.6	12.3	11.7	2.7	3.4	3.9
ՌԴ	3.0	4.2	4.5	3.2	2.9	2.8
Վրաստան	15.1	17.2	12.2	6.1	7.0	6.8
Ուկրաինա	5.2	6.9	6.1	4.1	4.8	4.4
Միջին	**7.7**	**9.4**	**7.7**	**5.2**	**5.4**	**5.3**

Պորտֆելային ներդրումներ

2011 թվականին գրանցվել է պորտֆելային ներդրումների 10.4 մլն դոլարի զուտ արտահոսք՝ նախորդ տարվա 10.8 մլն դոլարի զուտ ներհոսքի փոխարեն: Այս փոփոխության պատճառը պարտավորությունների նվազումն է 10.8 մլն դոլարով:

Այլ ներդրումներ

2011 թվականին «Այլ ներդրումների» զուտ աճը կազմել է 737.1 մլն դոլար (2010 թվականին՝ 563.7 մլն դոլար): Արտաքին աշխարհի նկատմամբ ակտիվների աճը 2011 թվականին կազմել է 88.1 մլն դոլար (նախորդ տարի՝ 245.6 մլն դոլար): Աճի նման կրճատումը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է մասնավոր հատվածի կանխիկ դրամական միջոցների փոփոխությամբ: Միևնույն ժամանակ, պարտավորություններն արտաքին աշխարհի նկատմամբ 2011 թվականին աճել են 825.3 մլն դոլարով (2010-ին՝ 809.4 մլն դոլարով):

Պետական կառավարման մարմիններ

2011 թվականին ՀՀ պետական կառավարման մարմինների արտաքին պարտավորությունների զուտ աճը կազմել է 214.4 մլն դոլար (նախորդ տարի՝ 287.2 մլն դոլար):

Պետական հատվածի վարկերի ներհոսքը տարվա ընթացքում կազմել է 239.5[20] մլն դոլար (նախորդ տարի՝ 287.0 մլն դոլար): Ներհոսքի 38.0%-ը կազմել են Համաշխարհային բանկի և Գյուղատնտեսության

[20] *Ներառում է միայն փաստացի ստացումները:*

զարգացման հիմնադրամի (նախորդ տարի՝ 31.0%) 24.5%-ը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի (նախորդ տարի՝ 32.8%), 8.2%-ը՝ Ասիական զարգացման բանկի (նախորդ տարի՝ 7.8%) կողմից տրամադրված վարկերը:

Տարվա ընթացքում պետական հատվածի վարկերի հիմնական գումարի մարումները կազմել են 28.1 մլն դոլար (նախորդ տարի՝ 24.8 մլն դոլար), իսկ վճարված տոկոսավճարները՝ 40.4 մլն դոլար (նախորդ տարի՝ 36.9 մլն դոլար):


Բանկեր

Առևտրային բանկերի զուտ ներդրումային դիրքը[21] նվազել է 548.2 մլն դոլարով: Ընդ որում՝ արտաքին ակտիվներն աճել են 25.6 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 573.8 մլն դոլարով:

Ակտիվներում առևտրային բանկերի՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի նվազումը գերազանցել է ՀՀ բանկերի՝ արտասահմանյան բանկերում ունեցած ավանդների աճը: Այսպես, ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը նվազել են 17.7 մլն դոլարով, ընդ որում՝ երկարաժամկետ վարկերն ավելացել են 19.1 մլն դոլարով, մինչդեռ կարճաժամկետ վարկերը նվազել են 36.8 մլն դոլարով: Միևնույն ժամանակ, ՀՀ առևտրային բանկերի ավանդներն արտասահմանյան բանկերում ավելացել են 12.9 մլն դոլարով, ինչը մեծամասամբ պայմանավորված է կարճաժամկետ ավանդների աճով:

Պարտավորությունների աճը պայմանավորված է ՀՀ առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների ուղղակի ներդրումների ավելացմամբ՝ 81.8 մլն դոլարով, ոչ ռեզիդենտներից 291.5 մլն դոլարի չափով վարկերի ներգրավմամբ, ինչպես նաև ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների 214.0 մլն դոլարի աճով: Հարկ է նշել նաև, որ ներգրավված ավանդների աճի 58%-ը պայմանավորված է կարճաժամկետ ավանդների աճով:

Գրաֆիկ 12. Առևտրային բանկերի զուտ ներդրումային դիրքը 2006-2011 թվականներին[22]



Աղյուսակ 19. Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները (մլն դոլար)

Երկիր	2006	2007	2008	2009	2010	2011
Հայաստան	8.5	-308.8	-615.5	-357.1	-621.6	-1083.7

Մասնավոր հատված (առանց առևտրային բանկերի)

Տարվա ընթացքում մասնավոր հատվածի այլ ներդրումներն ավելացել են 11.5 մլն դոլարով, ընդ որում՝ ակտիվներն ավելացել են մոտ 60.4 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 48.9 մլն դոլարով:

---

[21] Ըստ վճարային հաշվեկշռի: Ի տարբերություն դրամավարկային վիճակագրության, վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության համաձայն, առևտրային բանկերի արտաքին ակտիվներ և պարտավորություններ ձևավորող գործառնությունների փոփոխությունը հաշվարկվում է առանց վերագնահատման և ներառում է ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները: Ընդ որում, վճարային հաշվեկշռում բանկային համակարգի մեջ ներառվում են նաև վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների ու պարտավորությունների հետ կապված գործառնությունները:

[22] Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ ներդրումային դիրքը ժամանակահատվածի վերջի դրությամբ ներառում է նաև վերագնահատումը:

Կանխիկ արտարժույթի ներհոսքը 2011 թ. զգալի չի եղել և կազմել է 40.3 մլն դոլար (նախորդ տարի՝ 203.6 մլն դոլար): Հետագա վճարման պայմանով արտահանված ապրանքների ծավալները՝ առևտրային վարկերի ակտիվային մասը, նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ աճել են և կազմել 16 մլն դոլար:

Պարտավորությունների մասով աճել է առևտրային վարկերի միջոցով ներգրավումը՝ նախորդ տարվա համեմատ՝ շուրջ 13 մլն դոլարով և կազմել է 27.3 մլն դոլար: Նշված ցուցանիշը կազմել է 2011 թվականի ապրանքների ներմուծման 0.7%-ը (նախորդ տարի՝ 0.4%-ը): Արտաքին աշխարհից ձեռնարկությունների կողմից ներգրավվել է 123.6 մլն դոլարի վարկ, միևնույն ժամանակ մարվել է 125.7 մլն դոլարի վարկ: Արդյունքում՝ զուտ ներգրավված վարկերը կազմել են բացասական մեծություն՝ մոտ 2 մլն դոլարի չափով (նախորդ տարի՝ 164.3 մլն դոլարի աճ): Ընդ որում՝ նշված վարկերը ներգրավվել են հիմնականում «Հիմնային մետաղների արտադրություն», «Մետաղական հանքաքարերի արդյունահանում», «Օդային տրանսպորտի գործունեություն» և «Գիտական հետազոտություններ և մշակումներ» ճյուղերում:


Կենտրոնական բանկ

Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները 2011 թվականին ավելացել են 58.6 մլն դոլարով (նախորդ տարի՝ 71.8 մլն դոլարով): 2011 թ. իրականացվել են 32.3 մլն դոլարի վճարումներ (տոկոսավճարներ և հիմնական գումարի մարումներ) և ստացվել են 81.9 մլն դոլարի նոր բաշխումներ[23], այդ թվում՝ ԱՄՀ ԸՖԳ (EFF)՝ 55.0 մլն դոլար, ինչպես նաև այլ վարկերի գծով՝ 26.9 մլն դոլար:

2011 թվականին ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստները ավելացել են 132.9 մլն դոլարով և տարվա վերջի դրությամբ կազմել 1932.5 մլն դոլար: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի շուկայում արտարժույթի զուտ վաճառքը կազմել է 94.0 մլն դոլար:

Ներմուծման ծածկույթի ցուցանիշը տարվա ընթացքում կազմել է 4.8 ամիս՝ նվազելով նախորդ տարվա 5.3 ամիս ցուցանիշի համեմատ: Պատճառը ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալների 13.9% աճն է: Նշենք, որ միջազգային պրակտիկայում զարգացող երկրների համար որպես ներմուծման ծածկույթի ցուցանիշի ընդունելի սահման է համարվում 3 ամսվա նշագիծը և հիմնականում պետք է պահպանվի հատկապես այն երկրներում, որոնց մուտքը միջազգային կապիտալի շուկաներ սահմանափակ է:

Գրաֆիկ 13. Համախառն արտաքին պահուստները և ներմուծման ծածկույթը 2006-2011 թվականներին



Համախառն արտաքին պահուստների բավարարության գնահատման մյուս կարևորագույն ցուցանիշը համախառն արտաքին պահուստներ/դրամային զանգված ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե ինչպիսին է ամբողջ դրամային զանգվածն արտարժույթով փոխարկելու հնարավորությունը՝ կապիտալի հնարավոր արտահոսքի պայմաններում: Նշված ցուցանիշը 2011 թվականին կազմել է 113%՝ նախորդ տարվա 130%-ի փոխարեն: Ընդունելի նշագիծ է համարվում դրամային զանգվածում պահուստների 5-20% մակարդակը:

[23] *Ներառում է միայն փաստացի ստացումները:*

Աղյուսակ 20. Համախառն արտաքին պահուստներ/դրամային զանգված (%)

Ցուցանիշ	2006	2007	2008	2009	2010	2011
Համախառն արտաքին պահուստներ / դրամային զանգված	114	90	81	168	130	113

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔ

2011 թվականի վերջի դրությամբ Հայաստանի զուտ ներդրումային դիրքը, ինչպես նախորդ տարիներին, բացասական էր և կազմել է 6709.1 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1032.7 մլն դոլարով: Ընդ որում՝ ակտիվներն ավելացել են 514.3 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 1546.9 մլն դոլարով:

Ըստ ներդրումային դիրքի՝ Կառավարության կողմից ներգրավված վարկերի գծով պարտավորությունները 2011 թվականի վերջի դրությամբ կազմել են 2954.9 մլն դոլար, իսկ ԿԲ վարկերի գծով պարտավորությունները՝ 618.7 մլն դոլար: 2011 թվականին միջազգային ներդրումային դիրքում առևտրային բանկերի կողմից ներգրավված վարկերն աճել են մոտ 288.6 մլն դոլարով: Ընդհանուր պարտավորությունների շուրջ 3709.0 մլն դոլարը (32.1%) կազմել են պետության պարտավորությունները, իսկ մնացած 7844.4 մլն դոլարը (67.9%)՝ մասնավոր հատվածինը, որի մեջ զգալի են ուղղակի ներդրումները (64.3%):


ՀՀ ռեզիդենտների կողմից տնօրինվող կանխիկ արտարժութային միջոցները և ավանդները, ըստ ՀՀ միջազգային ներդրումային դիրքի, կազմել են 1997.4 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 304.6 մլն դոլարով: Նշենք, որ ակտիվների նման աճը մասամբ պայմանավորված է Միջազգային հաշվարկների բանկի կողմից ՀՀ ռեզիդենտների՝ արտասահմանյան բանկերում ունեցած ավանդների վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվության արտացոլմամբ (մինչև 2011 թվականը այն չի հաշվառվել):

Աղյուսակ 21. Հայաստանի միջազգային ներդրումային դիրքը 2010 - 2011 թվականներին (մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշ	*Ներդրումային դիրքը 2010 թ. վերջին*	*Ներդրումային դիրքը 2011 թ. վերջին*
Զուտ ներդրումային դիրքը	**-5676.4**	**-6709.1**
Ակտիվներ	**4330.0**	**4844.3**
Ուղղակի ներդրումներ արտերկրում	85.5	163.1
Պորտֆելային ներդրումներ	13.8	12.9
Այլ ներդրումներ	2364.9	2735.8
Առևտրային վարկ	52.4	68.4
Վարկեր	268.7	249.9
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	1978.4	2338.1
Այլ ակտիվներ	65.3	79.5
Պահուստային ակտիվներ	1865.8	1932.5
Պարտավորություններ	**10006.4**	**11553.4**
Ուղղակի ներդրումներ ՀՀ-ում	4338.2	5045.7
Պորտֆելային ներդրումներ	33.7	17.8
Այլ ներդրումներ	5634.6	6489.9
Առևտրային վարկ	74.7	101.9
Վարկեր	4918.8	5531.3
Դրամավարկային կարգավորման մարմիններ	563.8	618.7
Պետական կառավարման մարմիններ	2742.3	2954.9
Բանկեր	654.2	942.8
Այլ հատվածներ	958.5	1014.9
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	432.9	644.9
Այլ պարտավորություններ	208.1	211.8

Եթե դիտարկենք տնտեսության հատվածներն առանձին, ապա կարելի է տեսնել, որ դրական ներդրումային դիրք ունեն միայն դրամավարկային կարգավորման մարմինները, իսկ բանկային, պետական և մասնավոր հատվածներն ունեն բացասական ներդրումային դիրք:

Գրաֆիկ 14. Տնտեսության հատվածների զուտ ներդրումային դիրքերը 2006-2011 թթ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ

Վիճակագրության վարչություն
Անահիտ Սողոյան, Անիկ Ալեքսանյան

Հաշվի առնելով ճգնաժամային տարիների փորձը՝ ներկայումս ՀՀ-ում ավելի ու ավելի է կարևորվում պարտքի արդյունավետ կառավարումը: Պարտքի արդյունավետ կառավարման խնդիրները եղել են ինչպես Կառավարության, այնպես էլ հասարակության ուշադրության կենտրոնում: Մասնավորապես՝ 2011 թվականին Համաշխարհային բանկի օժանդակությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներդրվել է պետական պարտքի կառավարման DMFAS 6 ծրագիրը: Ծրագիրը հնարավորություն է տալիս ունենալու պետական պարտքի գրանցման և հաշվառման միասնական բազա, ինչպես նաև կատարելու պարտքի կայունության գնահատման համար անհրաժեշտ վերլուծություններ: Հետագայում համակարգը կարող է ընդգրկել նաև մասնավոր հատվածի արտաքին պարտավորությունների վերաբերյալ տվյալները: Նշենք նաև, որ 2011 թվականին հաստատվել է ՀՀ Կառավարության՝ պարտքի կառավարման 2012 - 2014թթ. ռազմավարական ծրագիրը: Վերջինիս շրջանակներում ՀՀ Կառավարությունը պետական պարտքի կառավարման գործընթացում շարունակելու է հետևել պարտքի կառավարման թափանցիկության, գործողությունների հրապարակայնության, ներդրողների վստահության ամրապնդման և հաշվետվողականության սկզբունքներին: Փաստաթղթում քննարկվել են արտաքին պարտքի կայունության խնդիրները, ինչպես նաև արտաքին պարտքի ռազմավարությունը 2012 - 2014 թվականներին[24]:

Անդրադառնալով արտաքին պարտքի բեռը գնահատող ցուցանիշներին՝ նշենք, որ 2011 թվականին արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը բարելավվել է. այս ցուցանիշի վրա դրական ազդեցություն է ունեցել 2011 թվականին արտահանման աճը: Ինչպես և 2010 թվականին, 2011 թվականին նույնպես, ի տարբերություն ճգնաժամային տարիների, արտաքին պարտքի աճի մեծ մասը բաժին է ընկել մասնավոր հատվածի պարտքին: Վերջին տարիների ընթացքում մասնավոր հատվածի կողմից ներգրավված միջոցների աճը թեև մեծացնում է պարտքի բեռը (ավելի ցածր է արտոնյալության աստիճանը՝ ի տարբերություն պետական վարկերի), սակայն վկայում է մասնավոր հատվածի՝ արտաքին աշխարհից միջոցներ ներգրավելու հնարավորության մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանի արտաքին պարտքը 2011 թվականի վերջի դրությամբ կազմել է 7394.1 մլն ԱՄՆ դոլար[25], որից 3709.9 մլն ԱՄՆ դոլարը Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտքն է, 1614.1 մլն դոլարը՝ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը), 2070.1 մլն դոլարը՝ ոչ բանկ մասնավոր հատվածի պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը):

Պետական պարտքի ծավալները 2011 թվականին կազմել են ընդհանուր պարտքի 50.2%-ը, իսկ մասնավորինը՝ 49.8%-ը: Վերջինս պայմանավորված է 2011 թվականին առևտրային բանկերի և մասնավոր ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից արտաքին պարտքի զգալի ծավալների ներգրավմամբ:


ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտքը 2011 թվականին, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 266.5 մլն դոլարով և տարեվերջին կազմել 3709.9 մլն դոլար, ինչը գրեթե ամբողջությամբ ձևավորվել է երկարաժամկետ արտաքին վարկերի հաշվին:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը (հիմնականում բաղկացած է ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերից՝ 942.8 մլն դոլար և ավանդներից՝ 644.7 մլն դոլար) 2011 թվականին ավելացել է 478.8 մլն դոլարով և տարեվերջին կազմել 1614.1 մլն դոլար: ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տարվա ընթացքում ներգրավվել են 337.0 մլն դոլարի երկարաժամկետ վարկային միջոցներ, իսկ նախկինում ձեռք բերված երկարաժամկետ վարկերի դիմաց կատարվել են 130.9 մլն դոլար հիմնական գումարի մարումներ: 2011 թվականի վերջի

[24] Փաստաթուղթը հասանելի է https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/MAR25-28_1.pdf հասցեով:
[25] 2011 թվականին արտաքին պարտքի վերաբերյալ տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: Արտաքին պարտքը կազմվել է ԱՄՀ «Արտաքին պարտքի վիճակագրության հավաքագրողների» ձեռնարկում սահմանված մեթոդաբանությամբ, համաձայն որի՝ արտաքին պարտքն ընդգրկում է տնտեսության հատվածների արտաքին բոլոր պարտավորությունները, բացառությամբ ուղղակի ներդրումների (սակայն ուղղակի ներդրումների միջֆիրմային վարկերը ներառվում են արտաքին պարտքի մեջ): Ընդ որում՝ արտաքին պարտքի ցուցանիշները հաշվառված են հաշվապահական հաշվառման կուտակման սկզբունքով:


դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը 2010 թվականի համեմատ չի փոխվել և կազմել է 5.6%, իսկ միջին ժամկետայնությունը՝ 4.3 տարի (2010 թվականին՝ 4.6 տարի): 2011 թվականին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել Ռուսաստանը, Լյուքսեմբուրգը, Գերմանիան, Նիդեռլանդները, Ֆրանսիան: Զգալի են միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված միջոցները:

Գծապատկեր 1. ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը 2009-2011 թվականներին



ՀՀ այլ մասնավոր հատվածի (առանց առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների) արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ ավելացել է 359.0 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 2070.1 մլն դոլար: Պարտքի 49.0%-ը կամ 1014.9 մլն դոլարը կազմել են վարկերը, 43.0%-ը կամ 890.7 մլն դոլարը՝ միջֆիրմային վարկերը, իսկ մնացած 164.5 մլն դոլարը՝ այլ պարտավորությունները՝ ներառյալ առևտրային վարկերը: Մասնավոր հատվածի արտաքին պարտքն ավելացել է հիմնականում միջֆիրմային վարկերի ծավալների աճի հաշվին, որոնք 2011 թվականի վերջին կազմել են 890.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 42.9%-ով: Վարկերն ավելացել են 5.9 %-ով՝ կազմելով 1014.9 մլն դոլար: Զգալի չափով ավելացել են նաև առևտրային վարկերը՝ 36.6%-ով, կամ 27.3 մլն դոլարով՝ դառնալով 101.9 մլն դոլար (2010 թվականին՝ 74.7 մլն դոլար): 2011 թվականին ֆինանսական միջոցներ են ստացվել հիմնականում Ռուսաստանից (30.1%) ու Կանադայից (17.1%):

Գծապատկեր 2. Մասնավոր հատվածի պարտքային պարտավորությունները 2009 - 2011 թվականներին




Աղյուսակ 1. Մասնավոր հատվածի պարտքային պարտավորությունների կառուցվածքը (ներառյալ բանկերը և վարկային կազմակերպությունները)

մլն ԱՄՆ դոլար

Պարտավորություններ	*2009*	*2010*	*2011*
Ընդամենը մասնավոր հատվածի պարտքային պարտավորություններ	1911.5	2846.4	3684.2
որից՝			
Վարկեր	1045.5	1612.8	1957.6
Առևտրային վարկեր	60.5	74.7	101.9
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	382.2	432.7	644.7
Միջֆիրմային պարտավորություններ	355.7	630.9	897.5
Այլ պարտավորություններ	67.5	95.5	82.3

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների՝ ՀՀ Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին վարկերը 2011 թվականի վերջի դրությամբ[26] կազմել են 3568.2 մլն դոլար, որից 2950.9 մլն դոլարը ՀՀ Կառավարությանը տրված վարկերն են, իսկ 617.3 մլն դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի ներգրաված պարտավորությունները:

Գծապատկեր 3. Հայաստանի արտաքին պարտքի կառուցվածքն ըստ գործիքների և վարկառուների (2011 թ. վերջին)



2011 թվականին արտաքին պետական պարտքի ներհոսքը կազմել է 320.5 մլն դոլար, որի մոտ 87.2%-ը բազմակողմանի պաշտոնական աղբյուրներից ներգրավված միջոցներն են: Այսպես՝ Համաշխարհային բանկից և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից տարվա ընթացքում ներգրավվել են 100.7 մլն դոլարի, Արժույթի միջազգային հիմնադրամից (ԱՄՀ)՝ 113.7 մլն դոլարի, Եվրոմիությունից, Եվրոպական ներդրումային բանկից և Եվրոպական զարգացման բանկից՝ 45.6 մլն դոլարի, Ասիական զարգացման բանկից (ADB)՝ 19.6 մլն դոլարի ֆինանսական միջոցներ: Համաշխարհային բանկի կողմից գումարները տրամադրվել են հիմնականում «Զարգացման քաղաքականության գործողությունների II վարկ»՝ 21.0 մլն դոլար, «Փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիություն»՝ 10.0 մլն դոլար և «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում»՝ 9.9 մլն դոլար, վարկային ծրագրերի իրականացման համար: ԱՄՀ կողմից տրված 113.7 մլն դոլար վարկային միջոցները տրամադրվել են ECF (58.8 մլն դոլար) և EFF (54.8

[26] *Արտաքին պետական և պետական երաշխիքով վարկերի վիճակագրության հավաքագրման պատասխանատուն ՀՀ ֆինանսների (ՖՆ) նախարարությունն է: Ընդ որում, այս ցուցանիշը հաշվարկվում է հաշվապահական հաշվառման կանխիկ սկզբունքով և ներառում է միայն արտաքին աշխարհից ներգրավված վարկերի փաստացի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը: Տվյալների հաշվարկի ժամանակ օգտագործվում են նաև ԿԲ հաշվարկներում կիրառվողներից տարբեր փոխարժեքներ:*

մլն դոլար) վարկային ծրագրի շրջանակներում: Եվրոմիությունից ստացվել է 36.3 մլն դոլար՝ «Մակրոֆինանսական աջակցություն» ծրագրի շրջանակներում: Երկկողմ վարկատուներից տարվա ընթացքում ներգրավված 41.0 մլն դոլարի մեծ մասը՝ 29.4 մլն դոլարը, տրամադրվել է Գերմանական վերակառուցման վարկերի բանկի (KfW) կողմից՝ ջրամատակարարման ոլորտների, էներգետիկայի և հիփոթեքային շուկայի զարգացման վարկային ծրագրերի շրջանակում, և 6.8 մլն դոլարը՝ Միջազգային համագործակցության ճապոնական բանկի կողմից՝ էներգետիկայի ոլորտի վարկային ծրագրերի շրջանակում:

ՀՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄՀ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետությունը, 1992 թվականի մայիսի 28-ին ստորագրելով ԱՄՀ-ի Համաձայնագրի հոդվածները, դարձավ Հիմնադրամի անդամ: Կառավարիչների խորհրդում Հայաստանը ներկայացնում են ՀՀ ֆինանսների նախարարը (Կառավարիչ) և ՀՀ կենտրոնական բանկի նախագահը (Կառավարչի տեղակալ): Տնօրենների խորհրդում Հայաստանը Բուլղարիայի, Կիպրոսի, Իսրայելի, Մոլդովայի, Ուկրաինայի, Սիդեռլանդների, Ռումինիայի, Վրաստանի, Մակեդոնիայի, Խորվաթիայի, Բոսնիա-Հերցեգովինայի հետ միևնույն խմբում է, որի Կառավարիչը ներկայումս Նիդեռլանդների ներկայացուցիչն է:

Հայաստանի բաժնեմասը, մինչև բաժնեմասերի 11-րդ ընդհանուր վերանայումը, կազմել է 67.50 մլն ՀՓԻ, իսկ դրանից հետո (1998 թվականի հունվարի 30) ավելացվել է և այժմ կազմում է 92 մլն ՀՓԻ:

Հայաստանը ԱՄՀ-ի հետ կնքել է 9 վարկային համաձայնագիր: 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի պարտավորությունները ԱՄՀ նկատմամբ կազմել են 539.0 մլն ՀՓԻ: Ընդ որում՝ 1995 թվականի «Սթենդ-բայ» և ՀԲՖՄ (STF) ծրագրերի ֆինանսական միջոցների հետգնումն ավարտված է: Բացի 2009 թվականին կնքված «Սթենդ-բայ» և 2010 թվականին կնքված ԸՎԳ (ECF) համաձայնագրերից, բոլոր վարկերը ստացվել են Կենտրոնական բանկի կողմից: 2010 թվականին կնքված EFF համաձայնագրով 2011 թվականի ընթացքում ստացված 35 մլն ՀՓԻ գումարն ամբողջությամբ ստացել է Կենտրոնական բանկը, իսկ 2010 թվականին կնքված ECF համաձայնագրով 2011 թվականի ընթացքում ստացված 37.4 մլն ՀՓԻ գումարն ամբողջությամբ ստացել է Կառավարությունը:

մլն ՀՓԻ

Մեխանիզմների տեսակը	*Համաձայնագրի կնքման ամսաթիվը*	*Գումարն ըստ համաձայնագրի*	*Պարտավորությունները 31.12.2011թ. դրությամբ*
ՀԲՖՄ (STF)	*15.12. 1994*	*33.8*	*0.0*
«Սթենդ-բայ»	*28.06.1995*	*43.9**	*0.0*
*ԱՆՏԱ (PRGF) I***	*14.02.1996*	*109.4*	*0.0*
*ԸՎԳ (ECF) II****	*23.05.2001*	*69.0*	*22.4*
*ԸՎԳ (ECF) III****	*25.05.2005*	*23.0*	*21.1*
*ԸՎԳ (ECF) IV****	*17.11.2008*	*9.2*****	*1.3*
«Սթենդ-բայ»	*06.03.2009*	*533.6*	*350.4*
ԸՖԳ (EFF)	*28.06.2010*	*133.4*	*70.0*
ԸՎԳ (ECF) V	*28.06.2010*	*133.4*	*74.8*

** Տրամադրվել է ընդամենը 13.5 մլն ՀՓԻ:*

*** Կնքվել է որպես ESAF համաձայնագիր, իսկ 1999 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է PRGF:*

**** Կնքվել է որպես PRGF համաձայնագիր, իսկ 2010 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է ECF (ընդլայնված վարկային գործիք):*

***** Տրամադրվել է ընդամենը 1.3 մլն ՀՓԻ:*

2011 թվականին արտաքին պետական պարտքի հիմնական գումարի մարումները կազմել են 51.2 մլն դոլար, իսկ տոկոսավճարները՝ 50.4 մլն դոլար՝ նախորդ տարվա համապատասխանաբար 46.7 մլն դոլարի և 44.2 մլն դոլարի փոխարեն: Արտաքին պետական պարտքի սպասարկման ծավալներից 32.3 մլն դոլարը կամ արտաքին պետական պարտքի սպասարկման շուրջ 31.8%-ը կազմել է ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի սպասարկումը, ինչը նախորդ տարի կազմել էր 27.7 մլն դոլար: Ընդ որում՝ ԱՄՀ վարկերի դիմաց ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ կառավարությունը վճարել են 12.5 մլն դոլար տոկոսագումար և իրականացրել 22.8 մլն դոլար հիմնական գումարի մարում:

Վերը նշված հոսքերի արդյունքում 2011 թվականին Հայաստանի արտաքին պետական պարտքի զուտ ներհոսքը (արտաքին պարտքի գծով ներգրավված ֆինանսական միջոցների և վճարված հիմնական գումարի տարբերություն) կազմել է 269.3 մլն դոլար:

Աղյուսակ 2. ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ արժույթների (%)

Արժույթ	2009	2010	2011
ՀՓԻ	65.2	63.9	62.9
ԱՄՆ դոլար	20.7	20.2	19.9
Եվրո	5.0	4.5	6.0
Այլ	9.1	11.4	11.2

2011 թվականի ընթացքում ՀՓԻ-ի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժևորման հետևանքով Համաշխարհային բանկից (ներառյալ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը) և ԱՄՀ-ից ՀՓԻ-ով ներգրավված պարտքը համապատասխանաբար նվազել է 4.4 մլն դոլարով և 2.6 մլն դոլարով՝ նախորդ տարվա 21.9 մլն դոլար և 13.3 մլն դոլար նվազման փոխարեն, իսկ եվրոյի նկատմամբ դոլարի փոխարժեքի արժևորման հետևանքով Գերմանիայից, Ֆրանսիայից, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից, Եվրոմիությունից և Եվրոպական ներդրումային բանկից եվրոյով ներգրավված պարտքը նվազել է 5.1 մլն դոլարով՝ նախորդ տարվա 13.0 մլն դոլար նվազման փոխարեն: Փոխարժեքների տատանման հետևանքով արտաքին պարտքը նվազել է 7.2 մլն դոլարով: Նշենք նաև, որ հիմնական արժույթների նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկման հետևանքով դրամային արտահայտությամբ աճել են ինչպես Կառավարության արտաքին պարտքի սպասարկման ծախսերը, այնպես էլ ներգրավված վարկերի ծավալները:

Աղյուսակ 3. ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքը

Աղբյուրը	2009		2010		2011	
	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)
Բազմակողմ	2013.9	67.9	2253.7	68.3	2475.4	69.4
Համաշխարհային բանկ և Գյուղ. զարգ. հիմնադրամ	1274.3	43.0	1327.5	40.2	1403.2	39.3
ԱՄՀ	586.7	19.8	740.8	22.5	827.5	23.2
Ասիական զարգացման բանկ (ADB)	126.5	4.3	146.7	4.4	165.3	4.6
Եվրոմիություն	-	-	-	-	33.6	0.9
Նավթ արդյունահանող երկրների կազմակերպություն (OPEC)	25.0	0.8	28.7	0.9	28.3	0.8
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	1.3	0.04	10.0	0.3	13.7	0.4
Եվրոպական ներդրումային բանկ	-	-	-	-	3.9	0.1
Երկկողմ	952.8	32.1	1045.3	31.7	1092.8	30.6
Ռուսաստան	500.0	16.9	500.0	15.2	500.0	14.0
Ճապոնիա	270.6	9.1	374.4	11.3	397.2	11.1
Գերմանիա	142.7	4.8	132.7	4.0	155.0	4.3
ԱՄՆ	31.1	1.0	29.4	0.9	27.6	0.9
Ֆրանսիա	4.8	0.2	4.3	0.1	4.1	0.1
Աբու-Դաբի	0.0	0.0	0.9	0.0	3.1	0.1
Բելգիա (KBC Bank NV)	-	-	-	-	2.2	0.1
Լինսի հիմնադրամ	3.6	0.1	3.7	0.1	3.5	0.1
ԸՆԴԱՄԵՆԸ	2966.7	100	3299.0	100	3568.2	100

Նախորդ տարվա համեմատ պարտքի ներկա արժեքն աճել է՝ կազմելով 3138.3 մլն դոլար (նախորդ տարի՝ 3098.1 մլն դոլար): Այս աճը պայմանավորված է որոշ միջազգային տոկոսադրույքների[27] նվազմամբ[28], ինչպես նաև մի շարք նոր վարկերի ներգրավմամբ, որոնք տրամադրվել են արտոնյալության ցածր պայմաններով՝ բարձր տոկոսադրույք, մարման կարճ ժամանակահատված և այլն: ***Հարկ է նշել, որ***

[27] Արտաքին պարտքի ՆՍ հաշվարկման ժամանակ որպես զեղչման տոկոսադրույք սովորաբար օգտագործվում է CIRR տոկոսադրույքը: Այս տոկոսադրույքները հաշվարկվում և հրապարակվում են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից:

[28] Եթե նախորդ տարվա նկատմամբ տոկոսադրույքները մնային անփոփոխ, ապա արտաքին պարտքի ՆՍ-ն 2011 թվականին կկազմեր մոտ 3106.7 մլն դոլար:

որքան պարտքի ներկա արժեքը փոքր է պարտքի անվանական արժեքից, այնքան պարտքի պայմաններն արտոնյալ են, այսինքն՝ պարտքի բեռը փոքր է:

*Աղյուսակ 4. ՀՀ արտաքին պետական պարտքի տրամադրման պայմանները**

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011
Տոկոսադրույք (%)	0.8	1.2	1.3	1.4
Մարման ժամկետ (տարի)	33.7	26.7	25.5	26.0
Գրանտ-էլեմենտ (%)	55.3	39.3	31.5	31.6
Արտոնյալ վարկեր (%՝ ամբողջ պարտքի մեջ)	99.0	52.3	62.1	65.7
Հաստատագրված տոկոսադրույքով վարկեր (%՝ ամբողջ պարտքի մեջ)	99.7	65.4	63.6	60.5

** Հաշվարկված են միջին կշռված ցուցանիշների հիման վրա:*

Երկրի արտաքին պարտքի վերլուծության ու պարտքի բեռի գնահատման համար արտաքին պարտքը սովորաբար դիտարկվում է մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների հետ հարաբերության մեջ: Արտաքին պարտքի հարաբերական ցուցանիշներն արտաքին պարտքի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի բնութագրիչներ են: Այդ ցուցանիշների միջոցով գնահատվում է երկրի վճարունակության և իրացվելիության մակարդակը, ինչը նպաստում է արտաքին պարտքի արդյունավետ կառավարմանն ու առկա խնդիրների ժամանակին բացահայտմանը: Արտաքին պարտքի բեռի գնահատման համար Համաշխարհային բանկն օգտագործում է արտաքին պարտք/ՀՆԱ, արտաքին պարտքի ՆԱ/ՀՆԱ, արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում, արտաքին պարտքի ՆԱ/ապրանքների և ծառայությունների արտահանում հարաբերությունները:

Աղյուսակ 5. Արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշները և դրանց թույլատրելի սահմանները

Ցուցանիշներ	Պարտքի ծանր բեռ	Պարտքի միջին բեռ	Պարտքի թեթև բեռ
Արտաքին պարտքի ՆԱ/ ապրանքների և ծառայությունների արտահանում	220%-ից բարձր	132-220%	132%-ից ցածր
Արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում*	275%-ից բարձր	-	-
Արտաքին պարտքի ՆԱ /ՀԱԱ	80% -ից բարձր	48-80%	48% -ից ցածր
Արտաքին պարտք /ՀՆԱ*	50%-ից բարձր*	-	-

**Այս ցուցանիշների գծով Համաշխարհային բանկն ունի միայն առավելագույն սահման:*

Արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշների հաշվարկի համար Համաշխարհային բանկը, բացի պարտքի ՆԱ-ից, օգտագործում է նաև պարտքի անվանական ծավալները, քանի որ մի շարք երկրների արտաքին պարտքի ՆԱ-ն հնարավոր չէ հաշվարկել՝ արտաքին պարտքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության բացակայության պատճառով:

Աղյուսակ 6. ՀՀ արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշները 2008-2011 թվականներին (%)

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011
Արտաքին պարտք / ապրանքների և ծառայությունների արտահանում	196.0	375.3	324.7	307.2
Արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում	89.9	232.5	177.8	154.1
Արտաքին պարտք/ՀՆԱ	29.6	60.4	65.3	74.7
Արտաքին պետական պարտք/ՀՆԱ	13.6	37.4	35.7	37.5
Կարճաժամկետ արտաքին պարտք/պահուստներ	35.0	24.9	33.3	45.0

Այսպիսով, 2011 թվականին արտաքին պարտքի իրացվելիությունը գնահատող արտաքին պարտքի և ապրանքների ու ծառայությունների արտահանման հարաբերակցությունը բավականին բարձր է, սակայն 2010 թվականի համեմատ այն բարելավվել է: Արտաքին պարտքի կայունությունը գնահատող մյուս ցուցանիշը՝ արտաքին պարտք/ՀՆԱ, 2011 թվականին, նախորդ տարվա համեմատ, վատթարացել է: Նույն միտումն է նկատվել նաև արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշում:

Աղյուսակ 7. ՀՀ համախառն արտաքին պարտքի դիրքերը

մլն ԱՄՆ դոլար

	2009 թ. վերջի դրությամբ	*2010 թ. վերջի դրությամբ*	*2011 թ. վերջի դրությամբ*
Պետական կառավարման մարմիններ	**2471.1**	**2743.6**	**2955.8**
Կարճաժամկետ	0.0	1.3	0.4
Դրամի շուկայի գործիքներ	0.0	1.3	0.4
Վարկեր	-	-	-
Առևտրային վարկեր	-	-	-
Այլ պարտքի պարտավորություններ	-	-	-
Երկարաժամկետ	2471.1	2742.3	2955.4
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-		0.5
Վարկեր	2471.1	2742.3	2954.9
Առևտրային վարկեր	-	-	-
Այլ պարտքի պարտավորություններ	-	-	-
Դրամավարկային կարգավորման մարմիններ	**640.3**	**699.8**	**754.1**
Կարճաժամկետ	0.9	0.4	0.2
Դրամի շուկայի գործիքներ	(0.0)	-	-
Վարկեր	0.0	-	-
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	0.2	0.2	0.1
Այլ պարտքի պարտավորություններ	0.7	0.2	0.1
Երկարաժամկետ	639.4	699.4	753.9
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-	-	-
Վարկեր	501.4	563.8	618.7
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-
Այլ պարտքի պարտավորություններ	138.0	135.6	135.1
Բանկեր	**864.5**	**1127.9**	**1607.3**
Կարճաժամկետ	346.0	429.5	608.7
Դրամի շուկայի գործիքներ	0.0	-	-
Վարկեր	32.8	73.1	134.6
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	307.7	338.5	460.1
Այլ պարտքի պարտավորություններ	5.5	17.9	14.0
Երկարաժամկետ	518.5	698.4	998.6
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	12.5	23.1	5.8
Վարկեր	431.4	581.1	808.2
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	74.5	94.2	184.6
Այլ պարտքի պարտավորություններ	(0.0)	-	-
Այլ հատվածներ	**691.3**	**1087.7**	**1179.3**
Կարճաժամկետ	152.9	190.7	260.0
Դրամի շուկայի գործիքներ	-	-	-
Վարկեր	99.0	157.6	224.9
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-
Առևտրային վարկեր	18.8	24.7	28.9
Այլ պարտքի պարտավորություններ	35.1	8.4	6.7
Երկարաժամկետ	538.4	897.0	918.8
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-	-	-
Վարկեր	482.3	800.9	789.9
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-
Առևտրային վարկեր	41.7	50.0	73.0
Այլ պարտքի պարտավորություններ	14.4	46.2	55.8
Ուղղակի ներդրումներ՝ միջֆիրմային վարկեր	**355.7**	**630.9**	**897.5**
Համախառն արտաքին պարտք	**5022.9**	**6289.8**	**7394.1**

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2012